

# Գիտություն

ԴԵԿՏԵՄԲԵՐ  
12  
(253)  
2012 թ.

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ • Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

## ՀՀ ԳԱԱ քիմիական և երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիայի թղթակից անդամ, Ա. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտի տնօրեն Լևոն Թավադյանին շնորհվել է «Ակադեմիկոս Ն. Մ. Էմանուելի հիշատակի» շքանշան

ՀՀ ԳԱԱ քիմիական և երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիայի թղթակից անդամ, Ա. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտի տնօրեն Լևոն Թավադյանը դարձել է «Գիտական գործընկերություն» միջազգային բարեգործական հիմնադրամի, ՌԳ գիտությունների ակադեմիայի և Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի կողմից հայտարարված 2012 թ. մրցույթի դափնեկիր: Քիմիական և կենսաքիմիական ֆիզիկայի ոլորտում ունեցած ձեռքբերումների համար Լևոն Թավադյանը պարգևատրվել է «Ակադեմիկոս Ն. Մ. Էմանուելի հիշատակի» շքանշանով:

Այս շքանշանը ամեն տարի, սկսած 2007 թ.-ից, շնորհվում է երկու ռուսական և մեկ օտարերկրյա գիտնականների և 2 ռուսաստանյան ու մեկ օտարերկրյա կազմակերպությունների, որոնք մեծ ներդրում են ունեցել գիտական հետազոտությունների զարգացման գործում և հասել նշանակալից գիտական ու գործնական արդյունքների քիմիական կինետիկայի, ֆիզիկա-քիմիական կենսաբանության, կենսատեխնոլոգիայի և կենսաքիմիական ֆիզիկայի ասպարեզում:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոն

## ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցավ Ռաֆայիլ Զինուրովի «Հայաստան. հազարամյակների ուղի» գրքի շնորհանդեսը


Նոյեմբերի 23-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Հայաստան. հազարամյակների ուղի» գրքի առաջին հատորի շնորհանդեսը: Գրքի հեղինակը «Եդինայա Ռոսիյա» կուսակցության անդամ, Բաշկիրիայի Ազգային ժողովի նախագահի տեղակալ, իրավագիտության դոկտոր Ռաֆայիլ Զինուրովն է: Շնորհանդեսին ներկա էին ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը, ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Էդուարդ Շարմազանովը, «Ռուս-հայկական համագործակցության» նախագահ Յուրի Նավոյանը, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռուբեն Սաֆրաստյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը:

«Հայաստան. հազարամյակների ուղի» գիրքը հայոց պատմության չափածո շարադրանքն է հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը՝ հիմնված հայոց պատմիչների աշխատությունների վրա: Առաջին հատորը հասնում է մինչև հայոց գրերի գյուտը: Ներկայումս ընթացքի մեջ են երկրորդ և երրորդ հատորների տպագրության աշխատանքները:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոն

## Մ. ԱԲԵՂՅԱՆԸ ՀԱՅ ԵՎ ՎՐԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԵՐԱՇԵՄՈՒԹՅԱՆ ՀԵՆՔԻ ՄԱՍԻՆ

Դարեր շարունակ հայ ժողովրդին բաժին ընկած աղետների շարքում առանձնանում են 1918-1919 թվականները, երբ նաև սահմանային հարցերի հետ կապված խիստ լարված էին հարաբերությունները Հայաստանի ու Վրաստանի միջև՝ ընդհուպ մինչև պատերազմական գործողություններ: Մեր մեծերից Մանուկ Աբեղյանն առաջիններից էր, որ սթափության խրոխտ ծայր բարձրացրեց երկու հարևանների դարավոր համերաշխությունն ու բարեկամությունը վերականգնելու և պատմությամբ ամրագրված հենքի վրա դնելու համար:



Ստորև ներկայացնում ենք «Լոռի (պատմական տեսություն)» հոդվածաշարի առաջին մասի նախաբանից մի հատված և վերջին VI հատվածն ամբողջովին:

Անուշավան ԶԱՔԱՐՅԱՆ  
«Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագրի տեղակալ, բանասիրական գիտությունների դոկտոր

1919 թ. հունվարի վերջերին Մ. Աբեղյանը Թիֆլիսում հրատարակվող «Ժողովրդի ծայր» թերթի էջերում հրապարակում է «Լոռի (պատմական տեսություն)» հոդվածաշարը, որն առանձնանում է հայ և վրաց ժողովուրդների պատմական բարեկամության սթափ վերլուծությամբ ու ներկայացմամբ, այդ բարեկամության պահպանման շահախնդրությամբ: Նյութն ավարտվում է Վրաստանի ղեկավարությանն ուղղված խոհեմության ու զգաստության կոչով, այն է՝ հայկական պատմական տարածքները Հայաստանին միացնելու և վրացիների հետ հայերի համահավասար քաղաքացիական իրավունքներ ունենալու, ազգային մշակութային ազատություն վայելելու պարտադիր անհրաժեշտության մասին: Հոդվածաշարում արծարծված հարցերն ունեն արդիական խիստ հնչեղություն, քանզի այսօր էլ մեր հարևանների նկրտումները ընդհանուր առմամբ շարունակվում են:

### Մանուկ ԱԲԵՂՅԱՆ



միջոցին Լոռու հայ ազգաբնակչությունը չեն տեսնում, մեծ պատմական իրողությունները չեն տեսնիլ ու չեն տեսնիլ:

Դժբախտաբար մերոնք էլ կարողում են վրացական այդ ռուսատառ թերթերի հորինած պատմությունները, և որովհետև շատերը կարող են անտեղյակ լինել հայոց պատմության այնքան մանրամասնության, ինչպես մի գավառի՝ Լոռու պատմությունն է, կարող են մոլորվել, կարծելով, թե վրացական այդ թերթերը պատմական ճշմարտություններ են հայտնում: Այդպիսիներին մոլորությունից զերծ պահելու համար, ես ահա այստեղ անհրաժեշտ եմ համարում համառոտ կերպով դնել Լոռու պատմությունը:

## Լ Ո Ռ Ի

(ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ)

Վերջերս վրացական թերթերից մեկի մեջ այն պատմական գյուտն է հայտնված եղել աշխարհին, թե Լոռին երբեք չի մտել Հայաստանի մեջ և պատմության մեջ չի պատկանել հայերին: Վրացական շովինիստ թերթերն այնքան կուրացել են իրենց ազգամոլության մեջ, որ այժմ այլապես չեն կարող գրել: Եթե նրանք ազգերի ինքնորոշման այս

### Ակադեմիական Նոր հրատարակություններ


1. Լևոն Շանթ-երկերի ժողովածու, V և VI հատորներ:
2. «Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. 17:
3. Հեղ. կոլեկտիվ-Բիոթիկայի ներածություն:
4. Ռ. Սարինյան, Վ. Հարությունյան-Նշանավոր տնտեսագետների տողանը (մինչքենսյան շրջան). գիտակենսագրական ուրվագծեր:
5. Հեղ. կոլեկտիվ - Հայաստանը և Թուրքիան տարածաշրջանային տնտեսական ինտեգրացման գործընթացներում:
6. П. Мурадян- Кавказский культурный мир и Армения. Выпуск II.
7. Հեղ. կոլեկտիվ- Անին միջնադարյան Հայաստանի քաղաքական և քաղաքակրթական կենտրոն (միջազգային գիտաժողովի նյութեր):
8. Կ. Բալանթար-Ալնարկներ Փարաջանովի մասին:
9. Հ. Հովհաննիսյան - Ստանիսլավսկու «սիստեմը» և խաղի պարադոքսը:
10. Հեղ. կոլեկտիվ- Դիվան հայ վիմագրության, պրակ IX, Լոռի:
11. Հեղ. կոլեկտիվ - «Archaeology of Armenia in regional context».
12. Հեղ. կոլեկտիվ - Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում. Հանրապետական գիտաժողովի նյութեր. գիրք 2:

# Երիտասարդ հայ արվեստագետների գիտական յոթերորդ նստաշրջանը՝ նվիրված Տիգրան Զուխաջյանի ծննդյան 175-ամյակին

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հովանու ներքո իրականացվող երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի շրջանակներում և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի ֆինանսավորմամբ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում և ՀՀ ԳԱԱ գիտաժողովների տանը 2012թ. հոկտեմբերի 19-21-ը ԳԱԱ արվեստի ինստիտուտը գումարեց երիտասարդ հայ արվեստագետների գիտական յոթերորդ նստաշրջանը՝ նվիրված Տիգրան Զուխաջյանի ծննդյան 175-ամյակին:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղայանը. «Երիտասարդ հայ արվեստագետների գիտական հերթական՝ թվով արդեն յոթերորդ նստաշրջանն իր յուրահատկություններն ունի. յուրահատուկ է այն առումով, որ այս անգամ մեր աշխատանքները պետք է անցնեն ՀՀ նախագահի հովանու ներքո իրականացվող երիտասարդ գիտնա-

կանների աջակցության ծրագրի շրջանակներում, և մեր եռօրյա միջոցառումը ֆինանսավորվել է Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից: Իր պատմության մեջ առաջին անգամ մեր նստաշրջանն իր ընդգրկմամբ, միջազգային է, քանի որ նրա աշխատանքներին մասնակցելու են երիտասարդ արվեստագետներ ինչպես ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտից ու ՀՀ գիտակրթամշակութային այլ օջախներից, այնպես էլ Ռուսաստանի Դաշնությունից՝ Մոսկվայից ու Նովոսիբիրսկից և Իրանի Իսլամական Հանրապետությունից»: Ողջունելով գիտական նստաշրջանի մասնակիցներին՝ ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը նշեց. «Շատ ուշագրավ է գիտաժողովը նրանով, որ այն նախաձեռնել և կազմակերպել է արվեստի ինստիտուտը և իր շուրջը համախմբել Հայաստանի արվեստի խնդիրներով զբաղվող բոլոր օ-



ջախների ներկայացուցիչներին: Կան հյուրեր արտասահմանից՝ տարբեր երկրներից, և աստիճանաբար գիտաժողովը կստանա միջազգային կարգավիճակ...»: ՀՀ ԳԱԱ երիտասարդ գիտնականների խորհրդի նախագահ Գևորգ Վարդանյանը ՀՀ ԳԱԱ երիտասարդ գիտնականների խորհրդի և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի անունից շնորհակալություն հայտնեց գիտաժողովի կազմակերպիչներին, մասնակիցներին, որ կարողանում են այս դժվարին ժամանակաշրջանում կազմակերպել նմանատիպ միջոցառում, որը շատ կարևոր է մեզ համար, որովհետև շոշափվում են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են արվեստագիտությունը, հայագիտությունը, որը շատ ողջունելի է: ՀՀ ԳԱԱ նախագահության խորհրդական, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդար-

յանն իր ողջունյի խոսքում նշեց. «Արվեստի ինստիտուտում այս նախաձեռնությունը ուշ սկսվեց, բայց մեծ թափ առավ, նախ ընդգրկում է հանրապետության բոլոր հիմնական հաստատությունները, որոնք կապ ունեն արվեստի հետ, երկրորդ՝ ինչպես պարոն Աղայանն ասաց, գիտաժողովը միջազգային բնույթ է ընդունում, դա ինքնընտանրյան շատ կարևոր է...»:

Եռօրյա նստաշրջանի հինգ նիստերի ընթացքում ընթերցված 40 զեկուցումներում ներկայացվեցին արվեստագիտության տարբեր գիտաճյուղերը:

- ԵՐԱԾՏՈՒԹՅՈՒՆ:
- ՄՓՅՈՒՌՔԱՅԱՅ ԱՐՎԵՍ,
- ԿԵՐՊԱՐՎԵՍ,
- ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ:

Նստաշրջանն անցավ կառուցողական, շահագրգիռ քննարկումների և հարցադրումների մթնոլորտում:

Գիտաժողովի ավարտին եզրափակիչ խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, արվեստագիտության դոկտոր Աննա Ասատրյանը: Նա կարևորեց կարդացված զեկուցումների բարձր որակը, թեմատիկ բազմազանությունը:

Մերի ԿԻՐԱԿՈՍՅԱՆ  
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երիտասարդ արվեստագետների խորհրդի նախագահ

## Հայ գրապատության 500-ամյակը

### Վահան ՏՈՏՈՄՅԱՆՑ

# Հայերը և Կապուչինները

(Սկզբը՝ նախորդ համարում)  
Հայերը ուր որ գաղթած են իրենց առաջին գործը եղած է հիմնել եկեղեցի, դպրոց և տպարան: Թուրքիոյի ջարդերն շատ առաջ եգիպտոսի մէջ 1865-ին գոյութիւն ունէր հայ տպարան: Ռուսիոյ մէջ ալ հայերը ունեցան տպարաններ ոչ միայն մեծ կեդրոններու մէջ, ինչպէս Տփղիս, Մոսկուա, Շուշի, Պաքու և Երեւան, այլ նաեւ երկրորդական քաղաքներու մէջ. Ռոստով, Պաթուս, Արմաիր, Բէթիկորսք, Նոր Պայազիտ և Կանթազ:

Սինկաբուրի մէջ եւս, փոքրիկ հայ գաղութը, իրենց հայրենիքէն մի քանի հազար մղոն հեռու՝ ունեցան իրենց տպարանը: Առաջին անգամ հոն հաստատուեցան անգլիացի և հայ առեւտրականներ. 1833-ին ունեցան իրենց եկեղեցին, անգլիացիներէն առաջ. 1846-ին առաջին անգամ ըլլալով Սինկաբուրի մէջ հրատարակուեցաւ հայերէն թերթ: Հայերը հոն թեւ 1850-ին յիսուն հոգի էին, երեսուն այլ, եօթը կին, հինգ տղայ և ութ աղջիկ՝ սկսան հրատարակել 1849-ին «Ռուսումնասէր» անուն երկամսեայ հանդէս մը. առաջին առթիւ ունէին եօթը բաժանորդ միայն, որ յետոյ բարձրացաւ երեսունի և տեւեց մինչեւ 1853:

Սըմըրղանտի մէջ, Թուրքաստանի ներքերը, 1910 թուականին եւս կը յիշուի տպարանի մը հաստատութիւնը:

1859-ին, հարիւրեակ մը գաղթականներ հաստատուեցան Եգիպտոս, աղքատ վիճակի մէջ, զուրկ ուտելիքէ և հագուստաւ մէջ, որ սկսաւ շաբաթական լուրեր տալ և կ'ըսէր թէ թերթ մը սնունդի չափ հարկաւոր է:

Տպագրական գիւտէն վաթսուն տարի վերջ Վենետիկ սկսան հրատարակուիլ հայ թերթեր:

Առաջին տպագրուած գիրքը գերմաներէն է 1453-ին. յունարէն, եբրայեցերէն և իտալերէն՝ 1470-ին, արաբերէն՝ 1486-ին, սլովէն՝ 1491-ին, հայերէն՝ 1512-ին, ռուսերէն՝ 1517-ին, ֆլամերէն՝ 1523-ին, հունգարե-

րէն՝ 1533-ին, սկանտինաւեան՝ 1611-ին, վրացերէն՝ 1625-ին, չինարէն՝ 1663-ին, թուրքերէն՝ 1729-ին, պուլկարերէն՝ 1806-ին եւս, եւս:

Վրացիք աւելի բախտաւոր եղած են հայերէն, որովհետեւ իրենց անկախութիւնը կրցած են պահել մինչեւ 1801: Անոնք սակայն հայերէն 108 տարի վերջ ունեցած են միայն տպարանը:

Ժմ դարու առաջին տարիները յաջո-



ղած են ունենալ անհատական ջանքերով շատ մը հրատարակութիւններ. հայերը բացի իրենց տպագրական գործերէն՝ զբաղած են նաեւ վրացիներու գրական գործերով: Ամենէն հին տպարանը հայ մը հաստատուած է 1829-ին Յակոբ Արխանեան անուն: Մինչեւ 1833, միայն վրացերէն գիրքեր կը տպագրուէին. այս թուականէն յետոյ առաջին անգամ ըլլալով Վրաստանի մէջ ալ սկսան հայերէն գիրքեր հրատարակուիլ:

Թաւրիզի ֆրանսական հիւպատոս Ալֆօնս Նիքօլա, հռչակաւոր արեւելքցի կը հաստատէ թէ առաջին տպագրական հրատարակութիւնը պարսկական լեզուով եղած է Հնդկաստանի մէջ, առանց սակայն որոշելու թուականը: 1772-ին Մատրասի մէջ անգլիական տպարանի մը հետ կը գործէ նաեւ հայկական տպարան մը, Շահասիրեան հայ վաճառականի մը օժանդակութեամբ:

Առաջին հայ թերթը Մատրասի մէջ հրատարակուած է 1793-ին: Երկրորդը՝ Վենետիկ Միսիթարեաններու կողմէ 1811-ին, Պոլիս՝ առաջին անգամ 1831-ին: Մեր դրացի Յոյները աւելի ուշ սկսած են

Վիեննա հրատարակել 1811-ին:

Առաջին տպագրուած պարսկերէն գիրքը Մատրասի մէջ հայ տպարանի մը մէջ եղած է: Ասիկա կը հաստատուի անով թէ 1795-ին Մատրասի մէջ Վալի Մեմետ Ալի Նապիպը իրաւունք կու տայ պարսկերէն լեզուի ծանօթ Յարութիւն անուն կրօնականի մը, որպէս զի տպագրէ և բաժնէ պարսկերէն և արաբերէն գիրքեր, ինչ որ մինչեւ այդ ատեն արգիւտած էր:

Ծանօթ Ծանուն քահանայ «Ազդարար» անսաբերթի թիւերէն մէկուն մէջ միւնտոյն կրօնականը 1795-ին կը հրատարակէ սոյն վճռագիրը, որմէ յայտնի կ'ըլլայ հայերու նկատմամբ ունեցած վատախումբը: Ունիմք նաեւ ապացոյց յանձին Սիրզա Մելքոն Խանի, որ Լոնտոնի և Բարիզի մէջ Շահին ներկայացուցիչն էր: Նոյն ինքն Խանը յայտարարած է, թէ պարսկերէն առաջին գիրքը հրատարակած է հայ մը:

Թուրքերէն ալ Պոլսոյ մէջ, հայերէն 160, իսկ յոյներէն 120 տարի յետոյ ունեցած են իրենց տպարանը: Յիշատակելի է նաեւ ուրիշ պարագայ մը, որ Թուրքիոյ մէջ տպագրական ճիւղին առաջին աշխատաւորները եղած են հայեր: Նոյնիսկ Թուրքերը չեն կրնար հերքել այն ծառայութիւնը, զոր հայերը մատուցած են տպագրական ասպարէզին մէջ:

Թուրքերէն «Նեսիխ» և «Թուլիկ» տառերը կը յիշուին Արապօղլուի անունն՝ որուն ծուլիչն էր Պօղոս Այրապեան (1742-1835), անիկա իրաւունք ունէր երկար ատեն ծուլելու թրքական տառերը: Սուլթան Մահմուտ Բ զինքը անուանած էր տնօրէն պետական տպարանին, զոր երկար տարիներ հայերը կառավարած են: Անոր յաջորդները մինչեւ 1870 թուականը եղած են Յովհաննէս Միւհեմետիզեան, Յակոբ Պոյաճեան և Ճանիկ Արամեան, որոնք իրենց աշխատակից ունէին մեծ մասամբ քրիստոնեայ արհեստաւորներ և գործաւորներ, և մինչեւ հիմա ալ հակառակ Թուրքերու: Հայոց հանդէպ ունեցած ատելութեան չեն կրցած հրաժարիլ անոնց ծառայութենէն. անոնք պետական տպարանի մէջ ունէին կարելոր պաշտօններ: Սթաթիսթիկ համաձայն 1940 թուականին կը գործէին Պոլսոյ մէջ 16 հայ տպարաններ ընդդէմ 8 յունական, 8 թուր-

քական և 3 հրէական տպարաններու:

Բացի ասկից՝ Պոլսոյ մէջ կը հրատարակուէին 16 թերթեր, 4 թուրքերէն օրաթերթեր և 9 պարբերական, 5 հայերէն օրաթերթեր և 7 պարբերական, 5 ֆրանսերէն օրաթերթեր և 3 պարբերական, 2 թերթեր երկլեզուեան ֆրանսերէն և անգլիերէն, 2 հրէական սպաներէն, 1 գերմաներէն, 1 պարսկերէն, 1 սերպերէն և 1 իտալերէն ամսաթերթ մը:

Եւրոպայի մէջ Յունա-Բիւզանդական իշխանութեան օրով ընդհանուր առմամբ բոլոր Սլաւ ազգերը՝ որոնք կ'ապրէին Եւրոպական կեդրոններու մէջ, հայերէն աւելի կարողութիւն մը ցոյց չեն տուած տպագրական ճիւղին մէջ: Առաջին լեիերէն գիրքը 1491-ին տպուած է Քրաքովի մէջ: Թէ աւելի մանրակրկիտ կերպով դիտենք Ռուսիան, հազիւ 1564-ին կը յաջողին ունենալ իրենց առաջին տպարանը Մոսկուայի մէջ, երբ այն թուականներուն Աբգար դպիր փորձառութիւն ունեցած էր 45 տարիներէ ի վեր տպագրելու հայերէն լեզուով գիրքեր:

Դարձեալ հայ մըն էր, որ ծուլած է պուլկարերէն տառերը. այս հայն էր Թադէոս Տիվիտեան, որ 1830-1840 ունեցաւ Պոլսոյ մէջ իր տպարանը, ուր կը տպագրէր պուլկարերէն գրքեր և նոյն ինքն անձամբ կը ցրուէր զանոնք արեւելեան Ռումիլի մէջ՝ ուր կ'երթէւէկէր:

Տիվիտեան զարգացած անձնաւորութիւն մըն էր, տեղեակ յունարէն, իտալերէն և պուլկարերէն լեզուներու. անիկա մեծ դեր ունեցած է պուլկար յեղափոխութեան շրջանին, տպագրելով Պուլկարիոյ մէջ սիկառի թուրքերուն եզերքը յեղափոխական նշանաբաններ և խորհուրդներ, ասկէ յայտնի կ'ըլլայ, թէ պուլկարներն ալ հայերուն կը պարտին պուլկարական տառերը:

1846-ին հայերը օգտակար եղած են Սուրիացիներուն, Պոլսոյ մէջ հաստատելով Սուրիական տպարան մը Ապունա Մուրթան Եագուպ անուն կրօնականի մը ձեռքով, որ Երուսաղէմի Ս. Լուսաւորիչ Սուրիական վանքին վանականն էր: Մի քանի հայ երիտասարդներու աջակցութեամբ սոյն հոգեւորականը հաստատեց տպարան մը, ուր տպագրեց Սաղմոս մը և շատ մը ժամագիրքեր:

Այսպէս հայերը ջանացած են իրենց անձնուէր աջակցութիւնը նուիրելու իրենց դրացի ազգերուն և սրտանց պատրաստակամութիւն ցոյց տուած են օտարներուն եւս օգտակար հանդիսանալու տպագրութեան ճիւղին մէջ:



# ՀՀ ԳԱՍ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Ներկայացնում է ՀՀ ԳԱՍ սփյուռքի բաժինը

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱՍ արտասահմանյան անդամ Ռիչարդ Յոնսոնի մասին ծանոթացնում ենք ձեր հետընկերներին: Նրա հայրը՝ Գասպար Գավրոյանը, ծնունդով Արևմտյան Հայաստանի Խարբերդ գավառի Բազմաշեն գյուղից էր: Գասպարի հորը տարան «բանակ»՝ «կոմբեյն» թվարկային թշնամիների դեմ, իսկ գերդաստանի կանանց ու երեխաներին բռնաբերեցին Գասպարի գետը: Հենց այդ ժամանակ էլ մի քուրդ Գասպարին խլում է մոր ձեռքերից և ծառա տանում իր տուն: Սա էլ դարձավ երեխայի փրկության, սակայն և տառապանքների սկիզբը: 14-ամյա Գասպարը ականատես եղավ ցեղասպանության ողջ զարհուրանքին, գրեթե 2 տարի դեպքերեց Արևմտյան Հայաստանում մեկ, կովեց Անդրանիկի գլխավորած բանակում:



համարում), որն իր վրա էր վերցրել արևելահայերենի և արևմտահայերենի տարբերությունները սովորեցնելու գործը: Արդեն 1956 թ., հեռանալով Բեյրութից, Ռիչարդը վարժ խոսում և գրում էր հայերեն: 1957 թ. Ռիչարդը ամուսնացավ իր վաղեմի ընկերուհու և արդեն բժշկուհի Վարդիթերի հետ, ում ճանաչում էր դեռևս 1950 թ.: Այդ ամուսնությունից ծնվեցին Բաֆֆին, Արմենը, Անին և Կարոն: Ռիչարդը սկզբից դասավանդեց Լոնգֆելդի միջնակարգ դպրոցում. ուսուցանում էր աշխարհագրություն, պատմություն և անգլերեն լեզու: Սակայն նա անդադար մտածում էր Հայաստանի (թեկուզ և այն խորհրդային էր) մասին և ցանկանում էր իր աչքով տեսնել Ավետյաց երկիրը: 1959 թ. ամռանը Ռիչարդը առաջին անգամ ժամանեց Խորհրդային Հայաստան:

## Ռիչարդ ՇՈՎԸԱՆՆԻՍՅԱՆ

1920 թ. Կոստանդնուպոլսից փախավ Ֆրանսիա, այնտեղից էլ՝ Միացյալ Նահանգներ: Հասնելով «Ազատության» երկիր՝ նա որոշեց փոխել անուն ինչ՝ հետևում թողնելով վիշտն ու անդառնալի կորուստը և հիմք դնել նոր գերդաստանի: Սահմանին պահանջեցին անձը հաստատող փաստաթղթեր... Կար: Հարցրեցին ազգանունը. իրեն կոչեց Յոնսոնիսյան՝ վերցնելով հոր անունը:

տասարդը արագ տեղ էր գտնում ամերիկյան հասարակության մեջ: Ռիչարդն իր հայկական ինքնության աղբյուրը գտավ Ֆրեզնոյի Սուրբ Երրորդություն հայ առաքելական եկեղեցում, որտեղ նա մասնակցում էր երգչախմբում: Ֆրեզնոյի ՀՀ-ի և Ասպարեզ օրաթերթերի գրասենյակներում նա հաճախում էր Հայ երիտասարդաց դաշնակցության հանդիպումներին:

1925 թ. Գասպարը հասավ Թուրքի, որտեղ ապրում էր քեռին՝ Մանուկ Տեր-Սարգսյանը, և մեծ ազարակ ուներ: Նրա օգնությամբ Գասպարը արագ ոտքի կանգնեց, աշխատանք գտավ մոտակա վարսավիրանոցում: 1927 թ. ամուսնացավ Սիրուն Նալբանդյանի հետ: 1930-ական թվականներին իրականացավ Գասպարի երազները. նա գնեց մի հողակտոր և խաղողի այգի տնկեց: Նրանք ունեցան 4 զավակ՝ Յոնսոնես, որ մայրը անվանափոխեց Ջոնի, Բաֆֆին՝ Ռալֆ, Ռիչարդ և վերջապես Վերոնիկ (Վարդգես): Երեխաները մեծանում էին հոր՝ խաղողով հարուստ ազարակում հաճախ վայելելով Արսեն Միքայելյանի, Սիմոն Վրացյանի, բազմաշենի հայրենակից Ահարոն Գրիգորյանի (Քոբը Քրքորյանի հայրը) և այլոց ներկայությունը:

Ֆրեզնոյի համալսարանում պրոֆեսոր Հերբերթ Ֆիլիփսի դասախոսությունների շնորհիվ նա հասկացավ, որ պատմությունը մեռնում է միայն այն ժամանակ, երբ մոռացվում է: 1952 թ. սեպտեմբերին իրականացավ երիտասարդ Ռիչարդի փայփայած երազանքը. նա ընդունվեց Բերկլիի համալսարան: 1953 թ. նա ընտրվեց Հայ երիտասարդաց դաշնակցության Արևմտյան ափի խորհրդի նախագահ: Մինչ Ռիչարդը ամերիկահայ երիտասարդների մեջ հայոց ազգային ոգի էր սերմանում, սկսեց վերանայել նաև իր ապագան ՀՀ-ում:

1946 թ. աշնանը Ռիչարդը ընդունվեց Թուրքի Յունյոն ավագ դպրոցը և հասկացավ, որ ուզում է զբաղվել պատմությամբ ու դառնալ ուսուցիչ: 1950 թ. Ռիչարդը ճանաչվեց Թուրքի Յունյոն ավագ դպրոցի լավագույն աշակերտ և ստացավ ավարտական ճառն ասելու իրավունքը: Հետագա ուսումը շարունակելու համար նա մեկնեց Ֆրեզնո: Ռիչարդը իր արտաքին տվյալների շնորհիվ՝ կանաչայա, սպիտակ մաշկով, ամերիկյան բարբառով և փոքր քթով երի-

1952 թ. տակավին երիտասարդ Ռիչարդը մասնակցեց Սան Ֆրանցիսկոյում համայնքի շրջանակներում տեղի ունեցող մի քննարկման, որտեղ բանախոսը Սիմոն Վրացյանն էր: Զրույցի ժամանակ Վրացյանը նրան առաջարկեց մեկնել Լիբանան՝ Նշան Փարաջյանի համազգային ջեմարան, անցկացնել մեկ տարի և սովորել հայերեն:

1954 թ. Ռիչարդ Յոնսոնիսյանը ավարտեց Բերկլիի համալսարանը և մեկ տարի անց՝ 1955թ., հետևեց Վրացյանի խորհրդին և մեկնեց Լիբանան: Լիբանանում ջեմարանի ուսանողները նրան ընդունեցին մեծ ջերմությամբ: Նրանց մեջ էր և Վարդան Գրիգորյանը (ՀՀ ԳԱՍ արտասահմանյան անդամ, նրա մասին նյութը կարող եք կարդալ 2012, 2-րդ

1962 թ. Ռիչարդ Յոնսոնիսյանը Գուստավ Ֆոն Գրունբաումից՝ UCLA-ի Մերձավոր Արևելքի ուսումնասիրության կենտրոնի տնօրենից, առաջարկ ստացավ աշխատել իրենց համալսարանում միաժամանակ լծվելով թեկնածուական ատենախոսության պատրաստմանը: 1966 թ. նա մեծ հաջողությամբ պաշտպանեց գիտական թեզը՝ «Հայաստանը անկախության ճանապարհին» թեմայով: 1968 թ. զարմանը Ռիչարդ Յոնսոնիսյանի անմիջական մասնակցությամբ Լոս Անջելեսի մոտ՝ Մոնթբերլոյի Բիքենել զբոսայգում, ութսայուն հուշարձան բացվեց, որը նվիրված էր Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին: Այդ օրը նրան հաջողվեց մի պահ համախմբել ԱՄՆ-ի բոլոր հայերին՝ անկախ կուսակցական կամ անձնական տարածայնություններից:

1972 թ. Ռիչարդ Յոնսոնիսյանը դարձավ Հայաստանի և Մերձավոր Արևելքի պատմության պրոֆեսոր: Նա զբաղեցրեց Հայոց և կովկասյան պատմության բակալավրի, մագիստրոսի և գիտությունների թեկնածուների կոչումներ շնորհող ծրագրերի ղեկավարի պաշտոնը (1962-ից), նա Հայ կրթական հիմնարկության հայ ժողովրդի արդի պատմության ամբիոնի առաջին վարիչն էր (1987-ից), Հայագիտական հետազոտությունների ընկերության հիմնադիր նախագահն էր (1974, 1977, 1991-1992, 2006-2009): Նա Գուգենհայմի պատվավոր գիտնական է:

Ռիչարդ Յոնսոնիսյանը 60-ից ավելի գիտական հոդվածների և մոտ 20 մենագրությունների հեղինակ է, որոնցից խիստ արժեքավոր են Հայաստանը անկախության ճանապարհին (1967), Հայաստանի Հանրապետություն, քառահատորյակ (1981-1996), Հայոց Ցեղասպանությունը (1980), Հայկական պատկերը պատմության ու գրականության մեջ (1981), Հայոց ցեղասպանությունը. Պատմություն, քաղաքականություն, էթիկա (1992), Հայ ժողովուրդը հնագույն

շրջանից մինչ ժամանակակից շրջան երկհատորյակ (1997), Հիշողություն և մերժում. Հայոց ցեղասպանության խնդիրը (1998), Հայոց ցեղասպանությունը. մշակութային և բարոյական ժառանգությունը և այլն: Այսօր մեծ հայագետը լծված է նոր գործի, խմբագրում է պատմական Հայաստանի քաղաքների և նահանգների պատմությունը, որոնց մեջ ներառված են Հայկական Վան/Վասպուրական, Հայկական Բաղեշ (Բիթլիս և Տարոն), Մուշ, Հայկական Խարբերդ, Հայկական Կարին, Հայկական Կիլիկիա, Հայկական Կարս և Անի, Հայկական Չմյուռնիա/Իզմիր և այլն:

1982 թ. նա արժանացել է սուրբ Մեսրոպ Մաշտոց շքանշանին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին 2-ի (Սարգսյանի) կողմից, 2001 թ. Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին 2-ը (Ներսիսյան) նրան շնորհեց Սուրբ Սահակ և Մեսրոպ շքանշանը, 2001 թ. Նորին սրբություն Արամ 1-ի կողմից նրան շնորհվեց Կիլիկիո ասպետ շքանշանը:

Ռիչարդ Յոնսոնիսյանը մինչ այսօր էլ հնարավորություն ունի դեպքում սիրով գալիս է Հայաստան և կիսվում իր գիտելիքներով հայ երիտասարդ մասնագետների և գիտնականների հետ: Վերջին նման հանդիպումը տեղի ունեցավ 2011 թ. Նոյեմբերի 19-ին, ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնում, որտեղ նա կարդաց ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավաբար վճռին նվիրված դասախոսություն:

Հաշվի առնելով Ռիչարդ Յոնսոնիսյանի գիտական, մանկավարժական, հայապահպանության գործում ունեցած մեծ վաստակը, ինչպես նաև մայր հայրենիքի հետ սերտ կապերը՝ Հայաստանի Գիտությունների ակադեմիան 1990 թվականին նրան ընտրել է ԳԱՍ արտասահմանյան անդամ: Ի դեպ, նա հասարակագիտության բնագավառի առաջին գիտնականներից մեկն էր, ով ընտրվեց ԳԱՍ արտասահմանյան անդամ: 1994 թ. նա դարձավ Երևանի պետական համալսարանի, իսկ 1997 թ.՝ Արցախի պետական համալսարանի պատվավոր դոկտոր:

2012 թ. Նոյեմբերի 9-ին լրացավ մեծանուն հայի և վաստակաշատ գիտնականի 80-ամյակը, ինչի կապակցությամբ ՀՀ ԳԱՍ նախագահությունը ջերմորեն շնորհավորեց նշանավոր պատմաբանին:

Ռիչարդ Յոնսոնիսյանը ցայսօր մեծ ջանքեր է ներդնում հայապահպանության, ցեղասպանության ճանաչման գործում և սերտորեն համագործակցում է Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի և գիտակրթական այլ հաստատությունների հետ:

**Գոհար ԻՍԿԱՆՂԱՐՅԱՆ**  
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱՍ սփյուռքի բաժնի գիտքարտուղար

## Հայ ֆիզիկոսները Իրավիայում

Շուրջ հարյուր հազար բնակչությամբ ծովափնյա Ալգերո քաղաքը Իտալիայի մաս կազմող Սարդինիա կղզու հյուսիս - արևմուտքում է: Այս քաղաքում 2012 թվականի սեպտեմբերի 23-ից 28-ը կայացել է լիցքավորված և չեզոք մասնիկների կանաչացման երևույթներին նվիրված հերթական հինգերորդ միջազգային գիտաժողովը:

ազգային լաբորատորիան, երևանի պետական համալսարանը, երևանի պետական բժշկական համալսարանը: Գիտաժողովում ՀԿՊԻ-ի ֆիզիկոսների աննախադեպ հաջողությունը պայմանավորված էր նրանց մի շարք կարևոր գործոններով՝ համագործակցություն Իտալիայի, Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի գիտական կենտրոնների հետ, ինչպես նաև արդյունավետությունը և հեռանկարային ծրագրերը:

ՀԿՊԻ-ի պատվիրակությունը ղեկավարել է ինստիտուտի տնօրեն, ֆ.մ.գ.դ. Արտակ Մկրտչյանը, ով գիտաժողովի ենթաբաժիններից մեկի նախագահն էր և նիստերի ղեկավարներից ամենաե-

րիտասարդը: Գիտաժողովը Ալգերոյում կազմակերպել և կարդացած զեկուցումների հիմնադրույթների 205-էջանոց ժողովածուն հրատարակել է Իտալիայի միջուկային ազգային ինստիտուտը: Դրանում ընդգրկված են ՀԿՊԻ-ի ֆիզիկոսներ Ա.Ռ. Մկրտչյանի, Ա.Գ. Մկրտչյանի, Լ.Շ.Գրիգորյանի, Վ.Ռ. Քոչարյանի, Ա.Ե. Մովսիսյանի կարդացած զեկուցումների հիմնադրույթները, որտեղ շարադրված են ակուստոֆիզիկայի և ակուստոպլազմայի բնագավառներում ստացված հիմնարար հետազոտությունների արդյունքները:

«Գերարագ էլեկտրոնների ճառագայթումը պարբերական կառուցվածք-

ներում» (RREPS) երկու տարին մեկ գումարվող միջազգային գիտաժողովների շարքի հիմնադիր և ղեկավար Ռուսաստանի Դաշնության Տոմսկ քաղաքի Պոլիտեխնիկական համալսարանի պրոֆեսոր Ալեքսանդր Պոտիլիցինը և ՀԿՊԻ-ի տնօրեն Արտակ Մկրտչյանը գիտաժողովի ավարտին հրապարակել են ուշագրավ մի հայտարարություն: Դա այն է, որ 2013 թվականի աշնանը երևան և Մեղրի քաղաքներում գումարվելու է RREPS-ի և «էլեկտրոնների, նեյտրոնների և ռենտգենյան ճառագայթների ցրումը արտաքին ազդակների առկայությամբ» խորագրով (ղեկավար՝ Ալաիկ Մկրտչյան) պարբերաբար գումարվող համատեղ կազմակերպվելիք չորրորդ միջազգային գիտաժողովը (քաղաք Մեղրի):

Հարկ է նշել, որ ՀՀ ԳԱՍ ակադեմիկոս Ալաիկ Մկրտչյանը Ալգերո է >4

**IV**  
**Ահա Լոռու պատմությունը:**  
 Բորչալուի գավառի լեռնային մասը խրամ գետի աջ կողմում, Հայաստանի բարձրավանդակը պատմության սկզբից եղել է Հայաստանի մաս և հնագույն ժամանակներից եղել է հայաբնակ և իր մեջ պահել է հին հայությունը: Այնտեղ անենայն ինչ հայկական է, և հայ կուլտուրան է զարգացել նույնիսկ վրաց տիրապետության ժամանակ:

Մինչդեռ Թիֆլիսի գավառի հայերը, վրացական կեղծոնից մոտ լինելով, մասամբ ենթարկվել են վրացիներին և վրացախոս են դարձել: Հայաստանի բարձրավանդակը բոլորովին ազատ է մնացել վրաց ազդեցությունից. ո՛չ վրացի տարրը և ո՛չ վրացական կուլտուրան երբեք չեն կարողացել թափանցել դեպի Հայաստանի լեռները:

Ահա՛ թե որտեղից է գալիս վտանգը Թիֆլիսի վրա:  
 Թող վրաց առաջնորդները բարեկամանալ այժմ թուրքերի հետ, որքան կուզեն. բարեկամությունը միշտ էլ լավ բան է: Բայց պատմությունն ասում է, որ ազգերը միշտ էլ բարեկամ չեն մնում: Շատ անգամ բավական է մի հարված թուրքության կողմից հասցրած վրացիներին, որ այդ բարեկամությունը կործանվի: Եվ այդ հարվածը կարող է գալ մի օր. որովհետև միշտ էլ դրսից եկած մի ուժ չի լինիլ, որ վրացիների ֆիզիկական գոյությունը պահի:

Երկար դարեր հայությունն է նրանց պահել իր թիկունքով, որ իր վրա է առել թուրք-թաթարական հարվածների ծանրությունը 900 տարվա ընթացքում: Այդ թիկունքը սակայն, որ մի ժամանակ տարածվում էր Ալիս գետի ափերից մինչև

Քսաներոզ դարու վրաց ազգի առաջնորդները, սակայն, հայությունը օրեցօր ավելի ու ավելի հետ են մղում իրենցից. որովհետև նրանք այդ հին գահակալների արտաքին ռազմական ճանապարհն են միայն տեսնում: Նրանք մտածում են այսպես. որովհետև մի ժամանակ այդ գավառները վրաց տերության մեջ են եղել, և վրաց գործերն այս ու այն ճանապարհներով գնացել են, ուրեմն դրանք Վրաստանի անբաժանելի մաս են... Բայց շատ բան է եղել մի ժամանակ. ո՛ւմ գործերը մի ժամանակ ո՛ր տեղերով չեն անցել: Մի ժամանակ, և ի՞նչ մի ժամանակ, շատ ժամանակ Թիֆլիսն էլ, Վրաստանի շատ ժամանակները էլ ուրիշ ազգերի ձեռին են եղել:

Քսաներոզ դարում սոցիալիստներն ու դեմոկրատները, որոնց պարագլուխները Ռուսաստանի մեծ հեղափոխության համար ազգերի ինքնորոշման պատգամը տվին, ասում են՝ վրացիները միայն ինքնորոշվելու իրավունք ունեն. Գուրիացին ու Իմերեյը, Քարթվելն ու Մինգրելը իրավունք ունեն միանալու և մի պետություն կազմելու, թեպետ և դրանք մի ժամանակ բաժան-բաժան են եղել և նույնիսկ մի ազգ չեն կազմել, այլ լոկ վրացական ցեղեր, - իսկ հայերն այդ իրավունքը չունեն. լոռեցի ու ջավախեցի հային թույլ չպիտի տրվի, որ Այրարատի ու Շիրակի հայերի հետ միանա: Եվ ինչո՞ւ. որովհետև այդ գավառների վրա մի ժամանակ իշխել են Դավիթ թագավորը և Թամար թագուհին և ուրիշները. որովհետև այդ գավառները հարկավոր են Վրաստանի պաշտպանության համար:

Բայց վրաց առաջնորդները սխալվում են՝ կարծելով, թե ազգերի այս ինքնորոշման միջոցին հեշտ ու հանգիստ կզրկեն հայերին այդ ինքնորոշվելու իրավունքից: Նրանք հայերիս լավ չեն ճանաչում: Մենք «հաստակող» ազգ ենք. այսպես է բնորոշում մեզ նույնիսկ մեր ժողովրդական վեպը: Մենք հեշտությանը թույլ չենք տալիս, որ մեզ գրկանք հասցնեն. ուստի ինչքան մենք թուլացած լինենք, մինչև մեր կողքը բարակացնեն, բարակացնողն ինքն էլ կբարակի: Պարզ խոսենք, որովհետև ամեն գիտակից հայ էլ գիտե այդ: Այն օրից երբ անցած հունիսին վրաց ազգի ղեկավարները հայտարարեցին Լոռին և դեռ ավելի էլ դեռ իբրև Վրաստանի մաս, այն օրից արդեն հայ և վրաց ազգերի դարավոր բարի հարևանության հիմքը խախտվեց:

Ահա՛ թե որտեղ է հայ-վրացական դժբախտ պատերազմի սկզբնապատճառը: Դա ծագեց ոչ թե նրանից, որ իբր թե հայերը դեմ են Վրաստանի անկախության: Ամենն ինչ, հայերը երբեք դեմ չեն Վրաստանի անկախության, այլ միայն ցանկացող են: Մոլորված անհատներին անշուշտ հաշվի չպիտի առնել: Այլ այդ ծագեց միայն նրանից, որ վրաց ազգի ղեկավար կուսակցություններն իրենց իրավունքը համարեցին առանց մեզ հարցնելու Վրաստանի հետ միացնելու բուն հայկական և հայաբնակ գավառը:

Զգիտեմ հայի վերոհիշյալ հատկությունը լավ է, թե վատ. բայց ուրիշ ազգեր էլ այդպես են վարվում: Մոլտկեն, Գերմանիայի սահմանները պաշտպանելու համար, հակառակ Բիսմարկի կարծիքի, Գերմանիայի հետ միացնել տվավ Մեցը իր շրջակայքով, որտեղ ֆրանսիացի են, և ֆրանսիացիները երբեք չմոռացան այդ: Ուստի եթե վրաց առաջնորդները որևէ արժեք տալիս են հայերի բարեկամությանը, եթե չեն կամենում մեզ թուլացնելով իրենք ևս թուլանալ, որով ա-

վելի ևս կզորանա մի երրորդը, որ առանց դրան էլ մեզինք էլ և վրացիներից էլ շատ ու շատ ավելի զորեղ է, նրանք պիտի ձեռք քաշեն այն ցնորքից, թե հայերը երբևէ կհաշտվեն այն մտքի հետ, թե կարող է բուն հայկական և հայաբնակ Լոռին ոչ թե Հայաստանի հետ միացած լինել, այլ Վրաստանի:

Նրանք պետք է իմանան, որ Հայաստանի ազատության և միացման, ցրված հայերի մի տեղ ժողովվելու և փրկվելու առաջին երգը հնչել է դեռ 11-րդ դարի երկրորդ կեսին, երբ դեռ կային մի քանի անկախ հայ թագավորություններ, և թուրքերը դեռ նոր էին մտնում Հայաստան: Եվ այդ երգը, որ այժմ մտել է մեր ժամերգության մեջ, հնչել է առաջին անգամ Լոռվա սարերում, Հաղբատի վանքում, մեր մեծագույն վարդապետ Գովհաննես Սարկավազի բերանով, որ Հաղբատի վանքի առաջնորդն էր Կորիկյան թագավորների օրով, ժամանակի ամենանշանավոր գիտնականը, բազմակողմանի ընդունակությունների տեր, տոմարագետ, բնական գիտություններով զբաղվող, պատմագետ, բանասեր, միաժամանակ և փիլիսոփա, ճառասաց ու բանաստեղծ: Նա եղել է և մեծ ուսուցիչ, որ պատրաստել է շատ աշակերտներ, որոնք այնուհետև Հայաստանի ազատության և միացման նույն երգը շարունակել են հնչել մինչև մեր օրերը, մինչև լոռեցի Գովհաննես Թումանյանը:

Կարո՞ղ է մի այսպիսի գավառ, ինչպես Լոռին է, ուր ամենայն ինչ հայ հին կուլտուրան է բուրում առանց ցնցումների, հակառակ հայ ժողովրդի կամքի, կտրվել Հայաստանից և միանալ Վրաստանին:

Եթե մի ժամանակ Լոռին և Հայաստանից ուրիշ կողմեր միացել են Վրաստանին, որովհետև այդպես է կամեցել հայությունը. որովհետև վրաց վրա թագավորում էր Դավիթ պես մեկը, որ այնքան էր հարգում հայ կուլտուրան, որ ամեն անգամ, երբ լսում էր, թե արդեն խորին ծերության հասած Գովհաննես Սարկավազը գալիս է, ոտի էր կանգնում, նրա առաջը գնում և գլուխը խոնարհեցնելով օրհնություն խնդրում նրանից:

Վրացիներն, իհարկե, այժմ կարիք չունեն հայ գիտնականից օրհնություն խնդրելու. բայց եթե նրանք մեր բարեկամության կարիք ունեն, - ես հայ եմ և հայերին ճանաչում եմ, - այդ բարեկամությունը կարող են ստանալ միայն երկու պայմանով:

Հայաստանի հետ պիտի միանան Հայաստանի հայաբնակ գավառները:

Այդ միացումից հետո էլ բավական մեծ թվով հայեր կմնան Վրաստանում իբրև Վրաստանի քաղաքացիներ. նրանք վրացիներին հավասար իրավունքներ պիտի ունենան և պիտի վայելեն ազգային կուլտուրական ազատություն:

Եթե այս երկու պայմանները կատարվեն, էլ ուրիշ ոչ մի արգելք չկա, որ հայը վրաց ազգի հետ ընդմիջտ սերտ բարեկամ լինի. որովհետև մնացած անհարթությունները երկրորդական և ժամանակավոր են:

Իսկ եթե այս երկու պայմանները չկատարվեն, սրտի խորին ցավով եմ ասում, երկու քրիստոնյա և մասամբ ցեղակից, նույն ու նման կուլտուրա ու ծագումներն ունեցող երկու վիճակակից ու բարեկամ և իրար թիկունք եղող ազգերի մեջ համաձայնություն դժվար թե լինի. և այս ի մեծ դժբախտություն թե՛ հայերի և թե՛ վրացիների:

«Ժողովրդի ծայն», 31 հունվարի 1919, N 22:



Եվ որ զարմանալիք է, թուրք-թաթարական շրջանում, 13-18-րդ դարերում Լոռին կատարելապես ազատ է մնացել թուրք-թաթարական ցեղից, որ չի կարողացել մուտք գործել այնտեղ: Ապա ոչ միայն Լոռում, այլև խրամի ծախ կողմում մինչև Թիֆլիս արդեն վրացախոս դարձած հայերը ևս մասամբ դիմացել են թուրքերին և իրենց տեղում մնացել են. իսկ վրացական տարրերը, ընդհակառակն, մեծ մասամբ ոչնչացել են: Նրանց տեղը թուրքերն են բռնել Բորչալու և Ղարայեզգի դաշտերում, որոնք Վրաստանի մասերն են եղել: Նույն եղել է և Ախալքալաքի (մինչև ռուսաց տիրապետությունը) և Ախալցխայի գավառներում և նույնիսկ մասամբ Գուրիայում և Աջարիայում: Ինչքան էլ վրացիներն այս գավառների թուրքերին մահմեդական վրացիներ անվանեն, դրանով նրանք այդ թուրքերին վրացի չեն դարձնիլ:

Պատմության դասը խրատական պիտի լինի հասկացողի համար: Թիֆլիս քաղաքը պատմության ընթացքում շատ տասնյակ անգամներ առնված է օտարազգիների ձեռով, այնպես որ ավելի շատ օտարների ձեռին է եղել, քան իր բնիկ տերերի: Որքան ես գիտեմ, չիաշված Մեծն Տիգրանի շրջանը, երբ Թիֆլիս քաղաքն, երևի, չի եղել, հայերը Թիֆլիսն ընդամենը երեք անգամ են առել, այն էլ արաբացիների ձեռից: Բացի այդ՝ հազվադեպ է Լոռու վրայով արշավանք կատարվել Թիֆլիսի վրա, այլ թշնամին մտել է մեծ մասամբ Կուր գետի բաց հովտով: Այն աշխարհում, ուր 900 տարի առաջ թուրք-թաթարական տարր չկար, այժմ միապաղաղ թուրքություն է իշխում, սկսած Կասպից ծովից մինչև Վրաստանի գլուխը - Թիֆլիս: Եվ այդ թուրք-թաթարական ցեղը ոչ թե Լոռու լեռների վրայով է անցել դեպի Վրաստան, այլ Կուր գետի հովտով է բարձրացել մինչև Թիֆլիս:

Կուր գետը, Կղարջբից մինչև Միջագետք ու Կիլիկիա, որ իր մեջ ուներ Առաջին և երկրորդ Հայաստաններ, Փոքր և Մեծ Հայաստաններն ու Կիլիկիա և չէր թողնում արևելյան և արևմտյան թուրքերին ձեռք մեկնել իրար, - այդ թիկունքն արդեն շատ էր նեղացել թուրքական հարվածների տակ մինչև այս մեծ պատերազմը և այժմ այս մեծ պատերազմի ժամանակ այնքան է բարակել, որ այլևս չի կարող պաշտպանել վրացիներին:

Վրաց ղեկավար կուսակցությունները, օտարի լծից դեռ չազատված, հայերի վզին են ուզում լուծ դնել և իմպերիալիստական ոգով տարված, բնիկ Հայկական գավառներ Վրաստանին միացնել են ցանկանում, իբր թե Թիֆլիսի պաշտպանության համար: Բայց նրանք չեն հասնիլ իրենց այս նպատակին: Լոռվա սարերը և Ջավախքի բարձրավանդակը չեն, որ պիտի պաշտպանեն Թիֆլիսը, այլ կենդանի ժողովուրդը և նրա համակրությունը:

Վրացիները պարծենում են իրենց Դավիթ թագավորով և մանավանդ Թամար թագուհիով. բայց նրանց քաղաքականությունը չեն ըմբռնում հայերի նկատմամբ:

Այն միջնադարյան խավար ժամանակներում, երբ ազգերի ինքնորոշման գաղափարը չկար, և դինաստիան էր գլխավոր դերը կատարում տերությունների կազմության համար, այն ժամանակ այդ գահակալները հասկացան, թե ինչպես պետք է օգտվել մահմեդականությունից: Նրանք ոչ թե Հայաստանի սարերի վրա էին հույս դնում Վրաստանի սահմանները պաշտպանելու համար, այլ կենդանի հայ ժողովրդի վրա: Ուստի ոչ թե հայերին ճնշելու և թուլացնելու վրա էին մտածում, այլ նրանց ազատ թողնելով գործեցնելու. որով և իրենց սահմանները պաշտպանեցին և իրենց երկիրն ապահովեցին ու ծաղկեցրին:

## Հայ ֆիզիկոսները...

3 ժամանակ Սանկտ Պետերբուրգում և Մինսկում կազմակերպված միջազգային գիտաժողովների աշխատանքներին մասնակցելուց հետո: Դիֆրակցիոն անալիզի նորագույն մեթոդների և X-օպտիկայի հիմնարար խնդիրներին նվիրված Սանկտ Պետերբուրգի միջազգային գիտաժողովում (2012, 15-20-ը նոյեմբեր) Ա.Ռ. Սկրտչյան

ընդ հանդես է եկել «Ակուստիկական մոնոքրոմատոր և բարձր լուծողականությամբ X-ճառագայթների դիֆրակտոմետր» և «Ճառագայթների կոհերենտ ցրումը ակուստիկ նանոխողովակներում» զեկուցումներով: Պլազմային ֆիզիկային և պլազմային տեխնոլոգիաներին նվիրված Մինսկի միջազգային գիտաժողովում (2012,

17-21 նոյեմբեր) Ա.Ռ. Սկրտչյանը հանդես է եկել «Ակուստապլազման որպես պլազմայի գոյավիճակ» զեկուցմամբ: Գիտաժողովում ՖԿՊԻ-ի ֆիզիկոսների կարդացած և ներկայացրած 8 զեկուցումները բացառիկ են այն իմաստով, որ դրանցում ներկայացվել են ՖԿՊԻ-ում հիմնադրված գիտական ուղղությունների շրջանակներում կատարված հետազոտությունների արդյունքները: Նշված ուղղություններից հարկ է առաջին հերթին առանձնացնել ակուստաֆիզիկան և ակուստապլազման, որոնք

ինստիտուտի գերակա և մեծ ապագա խոստացող ուղղություններից են: Ավերոյում կազմակերպված միջազգային գիտաժողովին մասնակցած Հայաստանի պատվիրակության ճանապարհածախսի հիսուն տոկոսը հոգացել է ՀՀ կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեն:

Ասատուր ՓՈՇՍԱՆ  
 ՖԿՊԻ-ի տեղեկատվության բաժնի վարիչ

Կարսի մարզի Կաղզվանի գավառի նշանավոր Նախիջևան գյուղում 1912 թ. հունիսի 14-ին երկրագործ Զամբարձունի ընտանիքում է ծնվել ապագա մեծանուն երկրաբան, ակադեմիկոս Արշալույս Գաբրիելյանը: Գաբրիելյանների մեծաթիվ գերդաստանը անթիվ-անհամար գրկանքների գնով մի կերպ հասնում է Արևելյան Հայաստան և հաստատվում Թալինի շրջանի Արեգ գյուղում:

1938 թ. գերազանցությամբ ավարտելով ԵՊՀ աշխարհաերկրաբանական ֆակուլտետի երկրաբանության բաժինը, Արշալույս Գաբրիելյանը ռեկտոր Գարեգին Պետրոսյանի որոշմամբ գործուղվում է Մոսկվա և ընդունվում Օրջոնիկիձեի անվան երկրաբանա հետա-



ժամանակահատվածների 10-ից ավելի շերտախմբեր, որոնց արդյունքները հաստատուն տեղ են գտել 1982 թ. հրատարակված «Стратиграфический словарь СССР» հեղինակավոր տեղեկագրքում:

Ակադեմիկոս Գաբրիելյանը առաջին անգամ կազմել է պալեոգենի և նեոգենի հնէաբանորեն հիմնավորված մանրամասն շերտագրական սխեմաներ, որոնք ցայսօր չեն կորցրել իրենց արդիականությունը: Նա հեղինակ և համահեղինակ է Հայաստանի և Հարավային Կովկասի տարածաշրջանի ռեգիոնալ երկրաբանության, շերտագրության, հնէաբանության, հնաշխարհագրության, գեոմորֆոլոգիայի, տեկտոնիկայի, սեյս-

ընտրվել է ԳԱ Նախագահության անդամ: Նա երկար տարիներ հանդիսացել է միջազգային տեկտոնական, Համամիութենական շերտագրական գիտակորդինացիոն խորհուրդների անդամ, հանդես եկել միջազգային գիտաժողովներում, պարզևատրվել է Պատվո նշան շքանշանով: Իր բեղուն գիտական գործունեության վերջին շրջանում բազմավաստակ գիտնականը առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում Հայաստանի և հարակից շրջանների սեյսմատեկտոնիկայի և սեյսմաշրջանացման բարդ և խրթին հարցերին: Այդ տեսակետից առավել արժեքավոր են նրա «Сейсмоструктура Армянской ССР 1981 г.» աշխատությունը (համահեղինակներ՝ Գ. Սարգսյան, Գ. Պողոսյան), 1989 թ. հրատարակված «Новая схема сейсмоструктурного районирования территории Армянской ССР» համահեղինակներ Գ. Սիմոնյան, Ս. Փիրուզյան, Է. Գեղակյան և «Сейсмоструктура Армянского нагорья и сопредельных регионов» հոդվածները: Ցավոք պիտի նշել, որ մեծանուն գիտնականի չափազանց հարուստ և բազմաբնույթ գիտական ժառանգությունը դեռևս լիակատար և խորությամբ չի ուսումնասիրված: Հաշվի առնելով Ա. Գաբրիելյանի ծանրակշիռ և հսկայածավալ ավանդը կայնոզոյի դարաշրջանի (65 մլն տարի առաջ մինչև մեր օրերը) շերտագրության և հնէաբանության ասպարեզում, նրա ասպիրանտների և ուսանողների՝ հետագայում հայտնի հնէաբաններ Սուսաննա Գրիգորյանի, Յուլյա Մարտիրոսյանի և Պարզիկ Ասլանյանի կողմից գիտնականի ազգանվամբ են կոչվել Լոգեն-օլիգոգենի հասակի բրածո անողնաշարավոր կենդանիների (պլանկտոն ֆորամինիֆեր դիսկոցիկլին, փորոտանի) գիտության համար 3 նոր ձև՝ Globorotalia gabrieli Martirosjan 1970, Discocyclina gabrieli Grigorian, 1986, Nerita gabrieli Aslanjan 1959: Մեծավաստակ գիտնական Արշալույս Գաբրիելյանը մահացել է 1993 թ. մայիսի 5-ին: Երկայուն նրա անունով է կոչվում ԵՊՀ-ի երկրաբանական ֆակուլտետի երկրաբանության կաբինետը:

Հայկ ՄԵԼԻՔ-ԱՂԱՍՅԱՆ  
Երկրաբանական  
գիտությունների թեկնածու

# Մեծահուշակ երկրաբանը

Ակադեմիկոս Արշալույս Գաբրիելյանի 100-ամյակի առթիվ

խուզական ինստիտուտի (ՄԳԻ) ասպիրանտուրա: Այնտեղ նրա ուսուցիչներն էին մեծահամբավ պրոֆեսոր-երկրաբաններ, խորհրդային տեկտոնիստների դպրոցի հիմնադիր, ակադեմիկոս Նիկոլայ Շատսկին, ԽՍՄՄ շերտագրական խորհրդի նախագահ, ակադեմիկոս Վլադիմիր Մենները, ԽՍՄՄ ԳԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Անդրեյ Արխանգելսկին և այլոք: 1941 թ. երիտասարդ երկրաբանը աշխատանքի է ընդունվում ԽՍՄՄ ԳԱ հայկական ֆիլիալի (Արմֆան) երկրաբանական գիտությունների ինստիտուտ և միաժամանակ դասավանդում ԵՊՀ-ի աշխարհաերկրաբանական ֆակուլտետում:

Նա սկսում է ուսումնասիրել մերձերևանյան շրջանի պալեոգենյան (65-34 մլն տարի առաջ ընկած ժամանակահատված) և նեոգենյան (34-1.8 մլն տարի առաջ ընկած ժամանակահատված) համակարգերի, նստվածքային ապարների հնէաբանությունը և շերտագրությունը, որի արգասիքը եղավ «ՀՀ Կոտայքի շրջանի երրորդական նստվածքները» թեկնածուական ատենախոսությունը: 1946թ. գիտնականը Ողջաբերդ և Էլփին գյուղերի շրջակայքի օլիգոգենի (40-23 մլն տարի առաջ ընկած ժամանակահատված) հասակի

նստվածքային ապարներից հայտնաբերել և նկարագրել է գիտության համար նոր բրածո երկփեղկանի փափկամարմինների 2 ձև: 1945-1949 թթ. Ա. Գաբրիելյանը ղեկավարել է ՀՀ ԳԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի տարածաշրջանային երկրաբանության և հնէաբանության սեկտորը, իսկ 1949 թ., նրա անմիջական նախաձեռնությամբ, ԵՊՀ-ի երկրաբանական ֆակուլտետում կազմավորվում է հնէաբանության և պատմական երկրաբանության ամբիոնը, որը պրոֆեսոր ղեկավարեց մինչև 1981 թվականը: 1954 թ. Ա. Գաբրիելյանը պաշտպանում է «Հայաստանի երկրաբանական կառուցվածքի պատմությունը երրորդական ժամանակաշրջանում» թեմայով ատենախոսություն, և նրան շնորհվում է երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, 1956թ. նա ստանում է պրոֆեսորի կոչում և ընտրվում ՀՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ 1982 թ.՝ իսկական անդամ: 1956-1966 թթ. և 1985-1993 թթ. նա եղել է ՀԽՍՀ ԳԱ «Գիտություններ երկրի մասին» գիտական հանդեսի պատասխանատու խմբագիր: 1950-70 թթ. Ա. Գաբրիելյանը առաջին անգամ Հայաստանի տարածքում առանձնացրել և հնէաբանորեն հիմնավորել է կայնոզոյի դարաշրջանի տարբեր

մատեկտոնիկայի, պատմական երկրաշարժագիտության բազմաբնույթ հարցերին նվիրված ավելի քան 150 գիտական աշխատությունների, 7 մենագրության, որոնք թվում են «Палеоген и неоген Армянской ССР 1964 г.» կոթողային աշխատությունը, «Հայկական ԽՍՀ երկրաբանության բազմահատորյակի» I, II, V, VII հատորները (1960-1974 թթ.), «Стратиграфия СССР. Неогеновая система» (1987 թ.) I հատորի, մեկ ուսումնական ձեռնարկի, ինչպես նաև մի շարք տարբեր մասշտաբների հնաշխարհագրական, տեկտոնական, սեյսմատեկտոնական և սեյսմաշրջանացման քարտեզների: Հիմնական համահեղինակների ցանկում է աշխարհահռչակ բուսաբան և հնաբուսաբան ակադեմիկոս Արմեն Թախտաշանը:

Ա. Գաբրիելյանի խմբագրությամբ և անմիջական մասնակցությամբ 9 գիտնականների կողմից 1988 թ. լույս տեսավ «Геологические события на границе эоцена и олигоцена на территории Арм. ССР» գիտական աշխատությունը: 1983-1986 թթ. Ա. Գաբրիելյանը եղել է ՀԽՍՀ ԳԱ երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարը, իսկ 1986 թ.-ից մինչև իր կյանքի վերջը ղեկավարել է ԳԱ երկրաբանության բաժանմունքը և

## Հեռուստատեսային գովազդ՝ լափելու միջոցների, դեբիլացման և այլ բաների մասին

Ներկա հրապարակման ասելիքն ամենևին չի վերաբերում հեռուստատեսային հաղորդումները, կինոնկարները, անգամ Մոսկվայի եթերը մի քանի րոպեն մեկ երկար-երկար գովազդային հոլովակներով ընդմիջելու հայկական հեռուստատեսային օրենքի ուժ ստացած սովորույթին: Այս մասին շատ է խոսվել, անընդհատ հիշեցվել գովազդային հատվածների օրենքով սահմանված պարբերականության և ժամանակային տևողության մասին, սակայն, ինչպես համոզվել ենք, մեր հեռուստատեսային օրենքը չի գործում, և մարտնչող հետևողականությամբ՝ անտեսվում, որովհետև, երբ շահն առկա է, օրենքը անելիք չունի:

Խոսքը նաև այն մասին չէ, թե հաճախ որքան անձաշակ են այդ գովազդները, որքան անհեթեթ ու անիմաստ, Հայկո-Մկո-Հովոյական զագրելի գոեկուրսամբ և ասելիքի սնանկությամբ:

Վերջինի մի օրինակ. Արտաշես արքան բարեպաշտ էր ու աշխարհաշեն, որովհետև բարերար էր: Ուրեմն, հարգելի քաղաքացիներ, գործակցե՛ք Հայքիզմեսբանկի հետ:


Ասացեք, խնդրեմ, ի՞նչ կապ ունի

մեծն Արտաշեսը վաշխառուական բիզնեսով զբաղվող բանկի հետ, որը, պետք է ենթադրել, նույնպես «բարեպաշտ է և աշխարհաշեն»:

Եվ անգամ ազգային սրբությունները ոտնահարող այս տարածված և արատավոր գործելակերպի մասին չի խոսքը:

Մեր ասելիքը գովազդների բարոյական նկարագրի մասին է, այն մասին, որ այդ գովազդները հաճախ անբարո են, հակադաստիարակական, անթույլատրելի և անընդունելի: Որպես մեր ասածի հաստատում, վերապատմենք բազմաթիվ գովազդներից լոկ մի չնչին մասի բովանդակությունը:

Եվ այպես. էկրանում հայտնվում է խելագար դեմքով մեկը, որը սուպերմարկետում ինչ-որ ապրանք է փնտրում: Նա թափում է ցուցադրված ապրանքները, ոտնատակ է տալիս խանութի մյուս հաճախորդներին, ավերում ամեն ինչ մինչև նրա ուղեկիցները հեռվից ցույց չեն տալիս ինչ-որ տոպրակ: Հետո խճուղի, 300 կմ ժամ արագությամբ սլացող ավտոմեքենա, անտառի մի անկյուն, երանավետ ժպիտով խնջույքի նստած մի ընտանիք: Առաջ ընկնելով ասենք, որ



սա «Գրանտ Բենդի» պիկնիկային սպասքի գովազդն է, որի համար պետք է խելագարի դեմք ու վարք ունենալ, ոտնատակ տալ բոլորին, ավերել խանութը, ավտոմեքենան քշել 300 կմ/ժամ արագությամբ և... ընդամենը մի կտոր հաց ծաշակելու համար:

Գովազդի հարգելի հեղինակներ և մանավանդ՝ պատվիրողներ, մի՞թե պիկնիկային տոպրակի համար արժե այսպիսի այլաճակություններ գովազդել: Ի՞նչ էք սովորեցնում ձեր զնորդներին: Չէ՞ որ գովազդը լոկ նմուշի, օրինա-

կի գովաբանություն է, որը երբեք չպետք է լինի անբարո, հակացուցված ու պարսավելի:

Մեկ ուրիշ օրինակ. «օֆիսում» նստած մի սիրունատես աղջիկ դիտողություն է ստանում ղեկավարից՝ անգործ նստելու համար: Եվ... այս բարետես, համեստ աղջիկը հանկարծ վերցնում է գավազանն ու ներկաների ապշած հայացքի ներքո, կատաղությամբ ջարդում է համակարգիչը, հեռախոսը, ամեն ինչ... Հաջորդ պահին մենք տեսնում ենք օրիորդին, որը երանավետ ժպիտով պաղպաղակ է ուտում:

Գովազդային հոլովակի ասելիքը՝ «Գրանտ Բենդի» պաղպաղակ ուտելու ձեր իրավունքը»:

Նշանակում է, հարգելի քաղաքացիներ՝ պաղպաղակ ուտելու համար դուք պիտի դառնաք բարբարոս, վայրենի, կորցնեք մարդկային կերպը: Անկեղծ ասած, ամոթ է անգամ մեկնաբանել սույն խայտառակությունը:

Ահա բոլորին քաջ հայտնի գովազդի մի նմուշ ևս. առաջին անգամ դպրոց գնացող երեխային ողջ ընտանիքով բերում են լուսանկարչատուն: Չգիտես ինչու, երեխան որոշում է գաղտագողի լեզու ցույց տալ լուսանկարչին, և ապա, օգտվելով ստեղծված դաղարից, բերանը ազահաբար լցնել «Գրանդ Բենդի» կոնֆետներով: Վերջում մենք տես-

Աղուֆ ՄԱՆԹԱՇՅԱՆ, ՆՆ ԳԱԱ ակադեմիկոս

(Սկզբը՝ N 11-ում)

Շղթայական ռեակցիաների այլատրված ծյուղա-վորումներով ընթացող ածխաջրածինների գազաֆազ օքսիդացման և կրեկինգի ռեակցիաների մեծ դասա-կարգեր, որոնք ընկած են ածխաջրածինների բնական հումքի վերամշակման հիմքում, մնում էին շատ կարևոր և էֆեկտիվ մեթոդի՝ էլեկտրոնային պարամագնիսա-կան ռեզոնանսի (ԷՊՌ) կիրառման, ուղորտից դուրս, որն այդ ժամանակ ակտիվորեն ներդրում էր հետազոտա-կան պրակտիկայում: Այս մեթոդի կիրառման շնորհիվ կբացվեն սկզբունքորեն նոր հնարավորություններ ու-տումնասիրելու այդ բարդ պրոցեսների մեխանիզմը՝ հայտնաբերելով տարրական մասնիկները՝ ազատ ռա-

գիտնականների ուշադրությունը:

Մենք դառնում էինք քիմիական ֆիզիկայի բնագա-վառում տարբեր գիտական միջոցառումների և կոնֆե-րանսների մշտական մասնակիցներ: Մեր գիտական ակտիվությանը խթանում էին ակադեմիկոսներ Վ.Ն.Կոնդրատևի, Ն.Ս.Էմանուելի, Վ.Վ. Վոյեվոդսկու, Վ.Յ. Շտեռնի, Յ.Ն. Մոլիսի, Ա.Ե.Շիլովի, Ա.Լ.Բուչաչենկոյի այ-ցելությունները մեր լաբորատորիա: Նրանց հետ մենք բնարկում էինք մեր պրոբլեմները, գիտական խնդիր-ները և ստացված արդյունքները:

70-ական թվականներին լաբորատորիայում ստեղծվեց ինքնատարածվող բարձր ջերաստիճանա-յին սինթեզի (ԲԱՍ) բաժանումը: Մեթոդը մշակել էր

# Դա եղել է այսպես...

## Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի հիմնադրումը Հայաստանում

դիկալները, որոնք պատաս-խանատու են շղթայական պրոցեսների, քիմիական փո-խարկումների զարգացման և բազմաբնույթ միջանկյալ ար-գասիքների առաջացման հա-մար:

Լաբորատորիայում մշակ-վեց նոր մոտեցում այդ խնդրի լուծմանը և ստեղծվեց ինքա-տիպ մեթոդ՝ ռադիակների սա-ռեցման կինետիկական մեթո-դը՝ գրանցելով ակտիվ կենտ-րոնները ԷՊՌ եղանակով: Մե-թոդը թույլ տվեց ոչ միայն ա-ռաջին անգամ հայտնաբերել ազատ ռադիկալները այդ պրակտիկային կարևոր պրոցեսներում, այլև ուսում-նասիրել նրանց կինետիկական վարքը գազաֆազ շղթայական ռեակցիաների ընթացքում: Մեթոդը լաբո-րատորիայի այցեբարտը դարձավ և իր կիրառությունը գտավ երկրի տարբեր գիտահետազոտական կենտրոն-ներում ու նաև արտասահմանում: Ա.Բ.Նալբանդյանի և Ա.Յ. Մանթաշյանի գիտական ղեկավարությամբ ստեղծ-ված այդ մեթոդի աշխատանքների առաջին ցիկլը ամ-փոփվեց «Տարրական պրոցեսները դանդաղ գազա-ֆազ ռեակցիաներում» մենագրությունում և արժանա-ցավ Հայաստանի Պետական մրցանակի:


Հետագայում աշխատանքների գարգացմանը նպաստեց ռադիկալների սառեցման կինետիկական մեթոդի կիրառումը, որի շնորհիվ ստացվեցին կարևո-րագույն արդյունքներ ռադիկալային շղթայական ռեակցիաների ուսումնասիրման բնագավառում: Այս մեթոդին զուգընթաց, հետագայում մշակվեցին և ներդրվեցին հետազոտական պրակտիկայում այլ մե-թոդներ և մոտեցումներ, ինչը ապահովեց մեր հետա-զոտությունների առաջընթացն ու յուրօրինակությունը: Լաբորատորիայի աշխատանքների նկատմամբ հե-տաքրքրությունը մեծանում էր: Բոլոր հաջողություն-ներն ու նվաճումները բնարկում էինք ԶԽԻ-ի գիտնա-կանների հետ հաճախակի զեկուցելով Մոսկվայի սե-մինարներում:

Մեզ սկսեցին այցելել գիտնականներ ոչ միայն ու-րիշ հանրապետություններից, այլ նաև Անգլիայից, Ֆրանսիայից, Կանադայից, Չինաստանից, Գերմանիա-յից և այլ երկրներից: Նրանց որոշ մասը երկար ժամա-նակով էր գալիս մեզ մոտ, որպեսզի մանրամասնորեն ծանոթանար մեր աշխատանքներին: Արտասահմանի գիտնականների համար ավանդական էր դարձել եր-թուղին՝ Մոսկվա-Նովոսիբիրսկ-Երևան-Մոսկվա: Քիմ-ֆիզիկոսների կապերը զարգանում և ամրապնդվում էին:

Լաբորատորիայի կյանքում մեծ իրադարձություն էր Ն.Ն. Սեմյենովի այցը Երևան, որը տեղի ունեցավ հան-րապետության Գերագույն խորհրդի հրավերով: Լաբո-րատորիայի աշխատակիցները և քիմիկոսների հասա-րակությունը հնարավորություն ստացան շփվել լեգեն-դար գիտնականի հետ: Նա մանրամասնորեն ծանոթա-ցավ լաբորատորիայի աշխատանքներին և ԳԱ պրեզի-դենտ Վ.Հ.Յամբարձումյանին պատմեց մեր հաջողու-թյունների մասին:

Լաբորատորիայում զարգանում և ընդլայնվում էր գիտական խնդիրների սպեկտրը, որոնք լուծվում էին երիտասարդ հայ քիմֆիզիկոսների կողմից: Կարգերը աճում էին, պաշտպանվում էին ատենախոսություններ: 1969թ. որոշվեց Երևան քաղաքում կազմակերպել 2-րդ համամիութենական Այրման սիմպոզիումը: Ներկա էին այդ բնագավառում աշխատող շատ գիտնականներ: Նրանցից էին երիտասարդ, բայց արդեն լայն ծանաչում ձեռք բերած Ա. Մերձանովը, Գ.Մանիլեյը, Ա.Դրյոմինը, Լ. Ստեփանյանը, ինչպես նաև հանրահայտ Վ.Ն. Կոնդրատևը, Ֆ.Ի.Դուբովիցկին, Գ.Ա.Ֆրանկ-Կամենեցկին, Վ.Լ. Տալրո-զեն և ուրիշներ:

Լաբորատորիան գնալով ավելի շատ էր գրավում



պրոֆեսոր Ա.Գ. Մերձանովը ք. Չերնոգոլովկայում, ԶԽԻ-ի մասնաճյուղում: Նա իր վրա վերցրեց տվյալ բաժանումն-քի գիտական ղեկավարումը: Միաժամանակ լաբորատո-րիայում կազմակերպվեց ածխաջրածինների օքսի-դացման բաժանումը:

Շարունակվում էր կադ-րերի ակտիվ պատրաստու-մը ոչ միայն Երևանում, այլև Մոսկվայում, Չերնոգոլով-կայում՝ հայտնի գիտնա-կանների ղեկավարությամբ: 1975 թ. լաբորատորիան վե-

րակազմավորվեց քիմիական ֆիզիկայի ինստիտուտի: Ինստիտուտը ընդլայնվում էր: Առաջացան մի շարք լա-բորատորիաներ: Մեզ համար կառուցվեց նոր շենք: Մենք ամրապնդվում էինք «Քիմիական ֆիզիկա» միա-ցիալ կառուցվածքում:

Հետագայում ինստիտուտի աշխատանքները ստա-ցան պրակտիկ կիրառություն: Կիրովական քաղաքի Բարձր ջերմաստիճանային տաքացուցիչների գործա-րանում ներդրվեց ինստիտուտում մշակված մոլիբդե-նի դիսիլիցիդի ստացումը ԲԻՍ մեթոդով: Ինստիտուտի մի խումբ գիտնականների այդ աշխատանքները արժա-նացան Պետական մրցանակի, ինչը ինստիտուտի հեթ-թական նվաճումն էր:

1981 թվին, 30 և ավելի տարիներ սրանից առաջ, տոնվում էր ԽՍՀՄ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտու-տի 50-ամյակը: Տոնակատարությունը իրականացվեց երկու փուլով՝ Մոսկվայում և Երևանում: Նիստը և մի-ջոցառումները Մոսկվայում ավարտելով, մասնակիցնե-րը ժամանեցին Երևան: Դա մեծ տոն էր: Ժամանել էր գիտնականների մի մեծ խումբ ԶԽԻ-ից և արտասահ-մանից: Նրանց մեջ էին Անգլիայի Թագավորական ըն-կերության պրեզիդենտ՝ Նոբելյան մրցանակի դափնե-կիր Ջ. Պորտերը և Նոբելյան մրցանակի մեկ այլ դափ-նեկիր՝ գերմանացի ֆիզիկոս Մյոսբաուերը: Նիկոլայ Նիկոլաևիչը անձամբ գալ չէր կարող՝ առողջական խնդիրների պատճառով: Տոնակատարությունը երևա-նում ավարտվեց մեծ խմբույթով՝ Դվին հյուրանոցի ռես-տորանում, որտեղ բամադայում էր Ն. Ս. Էմանուելը:

Կայացած ստեղծագործական կապերի ավան-դույթներն այժմ արդեն երկու երկրների՝ Ռուսաստանի և Հայաստանի, հիմնված Ն.Ն. Սեմյենովի դպրոցի գի-տական սկզբունքների վրա, առաջվա պես ամուր են: Այսօր էլ մեզ մոտ գալիս են բարեկամներ՝ գիտնական-ներ Ռուսաստանի քիմիական ֆիզիկայի ինստիտուտ-ներից՝ Մոսկվայից, Նովոսիբիրսկից, Չերնոգոլովկայից:

1993 թ. Հայաստանի Հանրապետության ԳԱԱ-ի քի-միական ֆիզիկայի ինստիտուտը անվանվեց իր հիմ-նադրի՝ Ա. Բ. Նալբանդյանի անվամբ:

2002 թ. մենք նշեցինք Հայաստանի Հանրապետու-թյան ազգային ակադեմիայի Ա.Բ. Նալբանդյանի անվան ինստիտուտի 40-ամյակը և կազմակերպեցինք հոբել-յանական կոնֆերանս «Ժամանակակից քիմիական ֆի-զիկայի պրոբլեմները» խորագրով՝ Ն.Ն.Սեմյենովի ԶԽԻ-ի ՌԳԱ (ք. Մոսկվա) և քիմիական ֆիզիկայի պրոբ-լեմներ ինստիտուտի (ք. Չերնոգոլովկա) գիտնական-ների հետ համատեղ: 2006 թ. ՌԳԱ կառուցվածքային մակրոկինետիկայի և նյութաբանության ինստիտուտի (ք. Չերնոգոլովկա) հետ համատեղ երևանում կազմա-կերպվեց միջազգային սիմպոզիում «Ոչ իզոթերմ երևույթներ և պրոցեսներ» թեմայով, որում իրենց մաս-նակցությունը բերեցին գիտնականներ ոչ միայն Ռու-սաստանից և Հայաստանից, այլ նաև ԱՄՆ-ից, ճապո-նիայից, Ֆրանսիայից, Կանադայից և ուրիշ երկրներից: Հետագայում նմանատիպ միջազգային կոնֆերանս՝ նվիրված ԲԻՍ պրոբլեմներին, կազմակերպվեց Ծաղկա-ծորում: 2008 թ. նշվեց Ա. Բ. Նալբանդյանի 100-ամյա-կը: Այդ կոնֆերանսին ակտիվ մասնակցություն ցու- >7

# «Հայրենական մեծ պատերազմը նաև հայության գոյամարտն էր»

Այսպես է վերնագրված պրոֆեսոր Արմեն Հովսեփյա-նի վերջերս լույս տեսած ուշագրավ գիրքը:

Պրոֆեսիոնալ պատմաբան-քաղաքագետը հաջող-ված փորձ է անում տեղեկատվական բնագավառը հարս-տացնել հետահայաց պատմաքաղաքական արժեք ներ-կայացնող բազմաթիվ նոր տվյալներով ու փաստերով, պատերազմին նախորդած հայոց հերոսական ու ողբեր-գական պատմությանը վերաբերող կարևոր իրադար-ձությունների արձանագրումով:

Դժվար է չհամաձայնել հեղինակի հետ, որ ընդհա-նուր հայրենիքին, հանուր մարդկությանը սպառնացող ֆաշիստական վտանգի դեմ մահու-կենաց պայքարում եղբայրական ժողովուրդների հետ Հայաստանի և ընդ-հանրապես հայ ժողովրդի անօրինակ հերոսական մաս-նակցությունը, ֆաշիզմի դեմ հայության տոտալ զորա-կոչը նաև հարուցված էր ցեղասպանությունը կրկնվելու իրական վտանգով: Ֆաշիզմի դեմ մղվող պատերազմն-նաև հայոց ցեղասպանության համար, այդ գործում ֆա-շիստական Գերմանիայի հավերժ դաշնակից Թուրքիա-յի «խաղացող մարզիչ» Գերմանիայից արդար, թող, որ մասնակի, վրիժառություն էր, և ոչ թե հեղինակի անհար-կի զգացմունքայնություն, կամ թե՛ հայրենասիրական չափազանցում (հոգեբանները կասեին՝ ազգրավացիա):

Կրկնեք հանրահայտ վիճակագրությունը. «Ժողո-վուրդների պատերազմին» մասնակցել է շուրջ 600 հազ. հայորդի, որից կեսը՝ ժամանակին ընդամենը 1,3 մլն բնակիչ ունեցող Հայաստանից: Շուրջ 200 հազարը՝ խորհրդային Միության մյուս հանրապետություններից, իսկ 100 հազարը՝ հայկական Սփյուռքից: Մեծ եղավ գո-հերի թիվը. ավելի քան 200 հազ. հայ մարտիկ:

Մեր ժողովրդի զավակները, զորքի բոլոր տեսակնե-րում մասնակցել են ռազմաճակատի տարբեր հատված-ներում մղվող կռիվներին: Այդ թվում և դաշնակից զոր-քերի շարքերում: Հայազարմ ամենաբարձրաստիճան զո-րավարները ռազմաճակատ և նավատորմ են ղեկավա-րել, բանակներ ու կորպուսներ մարտի առաջնորդել: Պատերազմի տարիներին և դրանից հետո զորավարա-կան կոչումներ ստացած հայ մարշալների, գեներալնե-րի և ադմիրալների թիվը 162-ն է:

Խորհրդային Միության վրա հարձակումից անմիջա-պես հետո, ցուցադրելով իր հավատարմությունը, ավե-լի շուտ Հիտլերի թելադրանքով, Թուրքիան համալրված և հարձակվելու պատրաստ 26 ընտրովի դիվիզիա տե-ղադասեց Ախուրյանի աջ ափի երկարությամբ՝ մշտապես լարված պահելով երկրի հարավկովկասյան սահմանը:

Հեղինակի վկայակոչած հայտնի և նորահայտ շատ փաստերն ու քողագերծված գաղտնիքներն ավելի են համոզում, թե գերմանացիների աշխարհակալական նպատակների իրագործման համար իսլամական գոր-ծոնի խաղարկումով իրական ինչ սպառնալիք էր կախ-ված Հայաստանի և հայության գլխին: Գրքում փաստազ-րական անդրադարձ կա խորհրդա-թուրքական հարա-բերություններին, ցուցադրական չեզոք, իրականում պատերազմող Գերմանիայի երդվյալ դաշնակից Թուր-քիային պատժելու, առաջին հերթին խորհրդային Ռու-սաստանի թուլությունից օգտվելով ժամանակին գրա-ված հիմնականում հայկական պատմական տարածքնե-րի հետ վերադարձի խնդրին, սկսված քաղաքական, դի-վանագիտական երկխոսությանը, ավելի շուտ՝ «ճակա-տամարտին», և կապված դրա հետ՝ սփյուռքահայության հայրենադարձությանը: Թուրքիայից հողերը հետ պա-հանջելու, դրա հետ կապված՝ հատկապես հարցը մոռա-ցումից ասպարեզ բերելու, ավելին, այն միջազգայնաց-նելու և տարբեր երկրների քաղաքական-դիվանագիտա-կան բնարկման առարկա, մամուլում լայն լուսաբան-ման նյութ դարձնելու գործընթաց էր դա: Գործի մեջ ներքաշվեցին Հայաստանի ղեկավարությունը, հայոց ե-կեղեցին, Սփյուռքը՝ իր քաղաքական-հասարակական կազմակերպություններով: Հիրավի օգտակար և բարձրարժեք գիրք:

Աշխատանքը տպագրության են երաշխավորել ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի հումանիտար երկու ամբիոններ: Գիտական խմբագիրն է մեզանում Հայրենական մեծ պատերազմի պատմության խորագի-տակ-մասնագետ, պատմական գիտությունների դոկտոր Կ. Հարությունյանը:

Այս կարգի հրապարակումները կրկին լրջորեն խորիել են տալիս մեր նախընթաց պատմության, հատկապես զո-յապահպանական, ազգային-պետական անվտանգության հարցերի՝ կոնյուկտուրայից դուրս գնահատման և, ընդհան-րապես, մեր ազգային պետականության հիմքում ընկած գաղափարախոսության հստակեցման շուրջ:

Սարգիս ԽԱՉԱՏՅԱՆ

Գիտնականն առաջարկում է

# Արդյոք աղքատ է մեր հանրապետությունը բնական ռեսուրսներով

Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը շահագործում է Քաջարանի հանքավայրը: ԽՍՀՄ տարիներին պլանավորված էր Քաջարանի հանքավայրի ընդերքից տարեկան արդյունահանել և մշակել 9 մլն տ հանքաքար, որի պարագայում լեռնահանքային ձեռնարկությունն աշխատում էր բավականին բարձր արդյունավետությամբ: Այդպես էր մինչև Չանգեզուրի կոմբինատի ապապետականացումը և դրանից հետո՝ մինչև 2009 թ.: 2009 թ. Չանգեզուրի կոմբինատի տիրոջ ատրոսակը բացվեց, և նա ինքնակամ սկսեց աստիճանաբար մեծացնել հանքաքարերի արդյունահանումն ու մշակումը և 2012թ. այն հասցրեց 20 մլն տոննայի: Թե հետո ի՞նչ կլինի, դժվար է կանխագուշակել: Կարծում եմ, որ բացված ատրոսակը դժվար թե փակվի և, հավանաբար, ավելի ևս կբացվի, ու հանքաքարերի արդյունահանման ու մշակման քանակը կարող է հասցվել 50 մլն տոննայի (չէ որ այդպես էր ցանկանում պարոն ճշմարտյանը):

Ինչևիցե, այժմ հաշվարկենք, թե որքան հարստություն է փոշիացվում տարեկան 20 մլն տ հանքաքար արդյունահանելու և մշակելու պարագայում (մեր հաշվարկները կլինեն խիստ մոտավոր, քանի որ ստույգ տվյալներ հանքահարստացման արդյունքների վերաբերյալ ստանալն անհնարին է (այդպիսի տվյալներ մեզ չեն տրամադրում պատճառաբանելով, թե դրանք կունենան զաղտոնիք են)):

Նշենք, որ Քաջարանի հանքաքարերում պղնձից և մոլիբդենից բացի, հայտնաբերված են նաև մի շարք բաղադրիչներ, որոնց մի մասը՝ ռենիումը, ոսկին, արծաթը, բիսմութը, սելենը, տելուրը, սերտորեն կապված լինելով պղնձի և մոլիբդենի հանքանյութերի հետ, հանքահարստացման գործընթացում անցնում են խտանյութերի մեջ հիմնական տարրերին (պղնձին ու մոլիբդենին) ուղիղ համեմատական քանակներով, իսկ մյուս մասը՝ սկանդիումը, վանադիումը, մագնետիտ երկաթային հանքանյութը և պիրիտը ուղղակի կապ չունենալով հիմնական տարրերի հետ, խտանյութերի մեջ չեն մտնում և շրջանցելով խտանյութերը՝ անցնում են հարստապոչների մեջ և թափվում պոչամբարներ:

Ընդունենք, որ հանքահարստացման գործընթացում օգտակար տարրերի՝ պղնձի և մոլիբդենի, և դրանց հետ սերտորեն կապված տարրերի կորզումները հանքաքարերից խտանյութերի մեջ կազմում են միջին 80% (իրականում այդ կորզումները շատ ցածր են 80%-ից): Տարեկան 20 մլն տ հանքաքար արդյունահանելու

և մշակելու պարագայում կարող են ստացվել.  
-պղնձի խտանյութ՝ 133600 տ, որտեղ պղնձի քանակը կարող է կազմել 37408 տ (պղնձի պարունակությունը խտանյութում՝ 28%),  
-մոլիբդենի խտանյութ՝ 14208տ, որտեղ մոլիբդենի քանակը կարող է կազմել 7104տ (մոլիբդենի պարունակությունը խտանյութում 50):

Պոչամբարներ թափվող պղնձի քանակը կարող է կազմել 9352տ, իսկ մոլիբդենի քանակը՝ 1776տ: Նույնպիսի հաշվարկներով ստացվում է, որ խտանյութերի մեջ են անցնում և պոչամբարներ են թափվում հարակից բաղադրիչները հետևյալ քանակներով:  
Աղյուսակ 1

Տարրեր	Խտանյութերի մեջ անցնող քանակները	Պոչամբարներ թափվող քանակները
Ռենիում	2,66տ	0,67տ
Ոսկի	420կգ	108կգ
Արծաթ	23,8տ	6,0տ
Բիսմութ	31,7տ	8,0տ
Սելեն	23,8տ	6,0տ
Տելուր	20,2տ	5,0տ
Ծծումբ խալկոպիրիտ+մոլիբդենիտային	42360տ	10600տ
Երկաթ խալկոպիրիտային	32950տ	8240տ

Խտանյութերը շրջանցելով պոչամբարներ են թափվում վանադիումը, սկանդիումը, մագնետիտ հանքանյութերը:



յութի հետ կապված երկաթը և պիրիտ հանքանյութի հետ կապված երկաթն ու ծծումբը, որոնց քանակները կազմում են.

վանադիումինը՝ 6230տ, սկանդիումինը՝ 107,2տ, մագնետիտային երկաթինը՝ 144000տ, պիրիտային երկաթինը՝ 86.676տ (փոշիացվող երկաթի ընդհանուր քանակը՝ 271.866տ), պիրիտային ծծումբինը՝ 99.324տ (փոշիացվող ծծումբի քանակը կազմում է 152.284տ):

Նշենք, որ խտանյութերի վաճառքի պարագայում չեն գնահատվում, հետևապես և չեն փոխհատուցվում խտանյութեր անցած բոլոր հարակից բաղադրիչները, բացառությամբ ոսկուց (գնահատվում է այն ոսկին, որի քանակը պղնձի խտանյութի մեջ պակաս չէ 3,5 գ/տ-ից): Այլ խոսքով, մեր կողմից նշված հարակից բաղադրիչները, որոնք թափվում են պոչամբարներ կամ խտանյութերի վաճառքի պարագայում նվիրվում են խտանյութերի գնորդներին՝ փոշիացվում են:

Այժմ հաշվարկենք փոշիացվող տարրերի արժեքները (նշենք, որ փոշիացվող տարրերի գերակշիռ մասի գները վերցված են նախաճգնաժամային տարվա՝ 2007թ. տվյալներից, ծծումբինը՝ 2008թ. մայիս ամսվա, իսկ սկանդիումինը՝ 2011թ. միջին տվյալներից, որը կազմում է 5.216.700 դր/տ):  
Աղյուսակ 2

Տարրեր	Տարրերի քանակի միավորը	Տարրերի քանակը	Տարրերի միավորի արժեքը, դր.	Տարրերի ընդհանուր քանակի արժեքը, դր.
Պղնձ	տ	9352	7465	69.812.680
Մոլիբդեն	տ	1776	62200	110.467.200
Ռենիում	տ	3,33	7.777.700	25.899.741
Ոսկի	կգ	108	31500	3.402.000
Արծաթ	տ	29,8	450000	13.410.000
Բիսմութ	տ	39,7	24440	970.268
Սելեն	տ	29,8	52220	1.556.156
Տելուր	տ	25,2	116000	2.923.200
Վանադիում	տ	6230	40000	249.200.000
Սկանդիում	տ	107,2	5.216.700	559.230.240
Ծծումբ	տ	152284	650	98.984.600
Երկաթ	տ	271866	300	81.559.800
Ընդամենը				1.217.415.885

Այս աղյուսակում տեղ չեն գտել 33 ԳԱԱ երկրաբանության ինստիտուտի քիմիական լաբորատորիայի անալիզներով Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կողմից 2003թ. թողարկված խտանյութերում հայտնաբերված այնպիսի տարրեր, որպիսիք են նիկելը, կոբալտը, կապարը, ցինկը, պլատինը, պալադիումը և ուրիշները: Վերջիններիս քանակները Քաջարանի հանքավայրի ընդերքից տարեկան 20 մլն տ հանքաքար արդյունահանելու և մշակելու պարագայում կարող են կազմել. նիկելինը՝ 28,41տ, կոբալտինը՝ 10,65տ, կապարինը՝ 667,9տ, ցինկինը՝ 584,4տ, պլատինինը՝ 7,37կգ, պալադիումինը՝ 17,87կգ, որոնց ընդհանուր արժեքը 2007թ. նախաճգնաժամային տարվա գներով կարող է կազմել 5,801 մլն դոլար:

(Շարունակելի)  
Յրաչյա ԱՎԱԳՅԱՆ  
Երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր

## Դա եղել է...

6 ցաբերեցին նաև գիտնականներ Մոսկվայից, Նովոսիբիրսկից, Չերնոգոլովկայից:

Մենք նույնպես ակտիվորեն և կանոնավոր մասնակցում ենք գիտական միջոցառումներին՝ կոնֆերանսներին, սիմպոզիումներին, որոնք կազմակերպվում են Ռուսաստանում՝ Մոսկվայում, Չերնոգոլովկայում, Նովոսիբիրսկում: Դրանք միջոցառումներ են այրման, «բոցի կառուցվածքի», ինքնատարածվող բարձր ջերմաստիճանային սինթեզի, քիմիական կինետիկայի և կատալիզի թեմաներով, որոնք կազմակերպվում են Սեմյոնովի դպրոցի ինստիտուտների կողմից: Տարիներն անցնում են, իսկ Հայաստանի քիմիական ֆիզիկայի ինստիտուտը առաջվա պես պահպանում է ստեղծագործական կապերը Ռուսաստանի քիմիական ֆիզիկայի ինստիտուտների հետ:

1996 թ. նշվեց Ն.Ն.Սեմյոնովի 100-ամյակը: Հանդիսավոր նիստում, որը տեղի էր ունենում Մոսկվայի «Սյունագարդ դահլիճում», ներկա էին Ռուսաստանի առաջին պրեզիդենտ Բ.Ն.Ելցինը, վարչապետ Վ.Ն.Չերնոմիրդինը, հյուրեր արտասահմանից՝ Նոբելյան մրցանակի դափնեկիրներ և լեգենդար Յուրի Բորիսովիչ Խարիտոնը: Բացելով տոնական նիստը Բ.Ն.Ելցինը նշեց Սեմյոնովի՝ երկրին մատուցած մեծ ծառայությունները, խոսեց նրա ստեղծած գիտական ճյուղի՝ քիմիական ֆիզիկայի զարգացման մասին, ընդգծելով, որ «քիմիական ֆիզիկան ակտիվորեն զարգանում էր թե՛ Ռուսաստանում և թե՛ Հայաստանում»: Հաճելի էր լսել, որ Ռուսաստանի պրեզիդենտի համար պատրաստած խոսքում Հայաստանը նշվել էր ևս:

Ներկայումս, գտնվելով տարբեր պետություններում, մենք առաջվա նման գաղափարապես կապված ենք, և այդ կապը բնական է՝ հիմնված մեծ գիտնական-բնագետ Նիկոլայ Սեմյոնովի դպրոցի գիտական ավանդույթների վրա՝ գիտնական, որը բացեց նոր դարաշրջան քիմիական փոխարկումների գիտության մեջ:

## «Եռուստաստեսային...»

5 նում ենք լուսանկարչի գարմացած դեմքը, որը ապշած նայում է փոքրիկ տղայի անսովոր ուռած թշիկներին ու ընտանիքի անդամների նույնպես ուռած թշերին:

Հարգելի հեղինակներ և պատվիրատուներ, ի՞նչ է, որպեսզի ձեր արտադրանքը խժռեմ, պետք է երեխային հասակավոր մարդուն լեզու հանել սովորեցնել և ազահաբար լափել: Ամոթ է, չէ՞:

Ամբարո գովազդի ցցուն մնուշ է հետևյալ տեսահոլովակը: Երկու մանկահասակ տղաներ, երկու ընկերներ թենիս են խաղում: Խաղն ավարտելուց հետո նրանք միասին խմում են ինչ-որ հյութ և նկատում էլի չարաբաստիկ «Գրանտ Քենդի» շոկոլադի սալիկ: Սկսում են իրար հրմշտել, և ապա նրանցից մեկը թենիսի գնդակով նենգաբար խփում է ընկերոջ ճակատին և, ուշաքափ անելուց հետո, վերցնում խժռում է շոկոլադը: Այո, ինչ ստորություն ասես, որ չես անի «Գրանտ Քենդի» պաղպաղակի, շոկոլադի և կոնֆետների համար: Նպասակն արդարացնում է ամեն ինչ, որովհետև «Ուլ չհասցրեց, նա ուշացավ» բացատրում է «Գրանտ Քենդի»: Ախր ամոթ է, ի՞նչ եք քարոզում և սովորեցնում մարդկանց, երեխաներին: Եվ ինչո՞ւ են լռում պատկան մարմինները:

տակն արդարացնում է ամեն ինչ, որովհետև «Ուլ չհասցրեց, նա ուշացավ» բացատրում է «Գրանտ Քենդի»: Ախր ամոթ է, ի՞նչ եք քարոզում և սովորեցնում մարդկանց, երեխաներին: Եվ ինչո՞ւ են լռում պատկան մարմինները:

Մենք կարող ենք անվերջ շարունակել օրինակներ յայտնաբերել, սակայն ծանծաղի չլինելու համար հիշենք նաև նորագույն գովազդի մի փայլուն օրինակ և ավարտենք:

Եվ այսպես, երիտասարդ մի կնոջ տխուր դեմքը հանկարծ պայծառանում է, երբ սենյակ է մտնում ճգնավորի կերպարանով, մորուքով և աշխարհից վերացած մի երիտասարդ: Կինը կարոտած նետվում է դեպի երիտասարդը:  
- Վերջապես, չես պատկերացնի որքան էի կարոտել քեզ: Վերացած, դեբիլային կերպարանով երիտասարդից ոչ մի արծազանք: Կինը մի քիչ հեռանում է ամուսնուց և ասում.  
- Գիտե՞ս, մորուքը քեզ շատ է սազում:  
Երիտասարդը զարմացած և էլի վերացած, անհաղորդ դեբիլ դեմքով շփում է մորուքը: Ոչ մի արծազանք: Գովազդի վերջին կադրը. կինը գրկել է փոքրիկ մանչուկին և ասում է.  
- Նայիր, սա քո հայրիկն է:  
Եվ վերջ: Այս այլաընկալությունը նրա համար է, որ գովազդի Բիլայն շարժական ինտերնետի PRO ծառայությունը, էժան կամ ծրի լինելը, որից օգտվելիս հնարավոր է մոռանալ ժամանակ, ընտանիք, երեխա, ամեն ինչ: Ավարտենք:  
Այս ամենը, մեր համոզմամբ, անբարո է, հակադաս-տիարակչական: Պետք է հիշել նաև, որ միշտ չէ, որ նպատակը արդարացնում է ամեն ինչ: Ամոթ է, պարոնայք գովազդատուներ և մանավանդ՝ մտահղացման անտաղանդ հեղինակներ:

# Երկիրը մոտենում է այսպես կոչված, «X» ժամին՝ Կլիմայի փոփոխության «ծայրագույն սահմանին»

Այն կհանգեցնի շրջակա միջավայրի ավերման անդառնալի գործընթացին: Նման եզրակացության է հանգել գիտնականների մի մեծ խումբ՝ Բերկլիի կալիֆոռնիական համալսարանի կենսաբան էնտոմի Բարնոսկու գլխավորությամբ: Չողվածը տպագրված է Nature ամսագրում:

Գիտնականների կարծիքով մոլորակի բնակչության սրընթաց աճը, բույսերի և կենդանիների հազվագյուտ տեսակների անհետացումը, էներգետիկ պաշարների անխնայ օգտագործումը և գլոբալ տաքացումը հանգեցնելու են համընդհանուր ճգնաժամի, որի հետևանքները լինելու են անդառնալի: Վերջին անգամ մեր մոլորակը նման շրջադարձային վիճակում հայտնվել է 14 հազար տարի առաջ, երբ ավարտվեց սառցակալումը: Այդ ժամանակ երկրի երեսից անհետացավ աշխարհի կենդանական տեսակների կեսից ավելին, և բոլոր մայրցամաքներում սկսվեց մարդկային հասարակության առաջացումը բացատրում են գիտնականները:



Օրգանական վառելիքի այրման հետևանքով, մինչևինդուստրիալ դարաշրջանի համեմատությամբ մթնոլորտում ածխաթթու գազի պարունակությունը աճել է 35 տոկոսով: Դրա հետևանքով համաշխարհային օվկիանոսի աղտոտվածությունը վերջին քսան տարում աճել է 5 տոկոսով: Եվ այն պատճառով, որ քաղաքները սկսել են մեծ արագությամբ աճել և ընդարձակվել ու գրավել ավելի ու ավելի տարածքներ, կենսաբազմազանությունը նվազում է: Չետագոտության հեղինակները ընդգծում են, որ երկրի բնակչության աճը ուժեղացնում է ծանրաբեռնվածությունը մոլորակի ռեսուրսների վրա: Եթե զարգացած երկրներում ծնելիության մակարդակը մնա այնպես, ինչպես կա, ապա 2050 թվականին մոլորակի վրա բնակչության թիվը կհասնի 9 միլիարդի, դրա վերջին՝ 27 միլիարդի:

Գիտնականները նախագուշակում են, որ եթե ամեն ինչ թողնվի ինչպես կա և չձեռնարկվեն որոշակի միջոցներ, ապա գլոբալ փոփոխությունները տեղի կունենան առաջիկա մի քանի տասնամյակի ընթացքում: «Չենք որ երկիրը կմոտենա կրիտիկական միջին, գրեթե անհնար կլինի մեր մոլորակը վերադարձնել առաջվա վիճակին», պնդում է կենսաբան Բարնոսկին:

Ի դեպ նկատենք՝ այն, որ մարդկությունը մոտակա տարիներին կարող է կանգնել գլոբալ էկոլոգիական աղետի առջև՝ ասվել է բազմիցս: Այս տարվա ապրիլին հրապարակված «Երկիր մոլորակի վիճակը» դեկլարացիայում, որը զուգահեյց ՄԱԿ-ի հեթթական համաժողովին, հաղորդվում էր, որ մարդկությանը

մնում է ընդամենը 10 տարի՝ խուսափելու անդառնալի հետևանքներով հղի գլոբալ էկոլոգիական աղետից:

- Չետագոտությունները ցույց են տալիս, որ էկոհամակարգի գոյությունը այն տեսքով, որում նա գոյատևել է վերջին հարյուրամյակներին, մարդկային քաղաքակրթությանը սպառնում է կործանարար հետևանքներով, ասված է վերոնշյալ փաստաթղթում:

Անցյալ տարվա նոյեմբերին, կլիմայի փոփոխություններով զբաղվող փորձագետների միջազգային խումբը նախագուշակում է, որ գլոբալ տաքացմանը զուգընթաց մարդկությանը սպառնում են ջրհեղեղներ և երաշտներ: Եվ մարդիկ որքան քիչ են պատրաստ դիմակայելու գալիք աղետին, այնքան մեծ է ռիսկը՝ անգոր գտնվելու համամոլորակային աղետի հանդեպ:

Համաշխարհային աղետից խուսափելու միջոցներից մեկը տարեսկզբին բարձրածայնեց ՆԱՍԱ-ն: Առաջարկվեց 14 տարբերակ, որոնք թույլ կտան վերահսկելու ջերմոցային գազերի արտանետումը: Գիտնականների կարծիքով այդ միջոցները կարող են երկիր մոլորակը փրկել գլոբալ տաքացումից և թույլ կտան կանխել գլոբալ աղետը:

## ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքը և սփյուռքի բաժինը շնորհավորում են Ալեքսանդր Պարույրի Սեյրանյանին Տոլլիո Լևի-Չիվիտայի անվան 2012 թ. մեխանիկայի և կիրառական մաթեմատիկայի ոլորտի միջազգային մրցանակ ստանալու և Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Մ. Ա. Լավրենտևի անվան 2012 թվականի մրցանակին արժանանալու համար: Մաղթում ենք մեր հայրենակցին գիտական բեղուն գործունեություն և նորանոր նվաճումներ:

- Ինչ հիմար էի ես, որ ամուսնացա քեզ հետ:
- Կարող եմք բաժանվել:
- Էդ մեկը կներես, ես կատարյալ հիմար եմ, ի՞նչ է...

- Հոգեբույժը այցելուին.
- Ուրեմն, երբ պատրաստվում եք քնել, ննջարանի դռնից այն կողմ թողեք բոլոր անարխտրոթ բաները:
- Բա ոնց չէ: Եվ դուք կարծում եք, թե՞ կինս կհամաձայնի մենակ քնել հյուրասենյակում:

- Որտեղի՞ց ես գնել այդ պտուտակահանները:
- Չգիտեմ, չեմ հիշում, բայց հաստատ գիտեմ, որ դրանք չինական են և պատրաստված են հատուկ սովորաբղթից և ֆուլգայի համաձուլվածքից:

- Հայտարարություն՝ ինքնաթիռի ուղևորների համար.
- Հարգելի ուղևորներ, խնդրում ենք անջատել բջջային հեռախոսները, համակարգիչները և բոլոր այն սարքերը, որոնք կարող են խաթարել օդանավի հրամանատարի կարգիտսիմուլյատորի աշխատանքը:

- Տղա՛ս, դու ամբողջ թխվածքը կերար և մտքովդ էլ չանցավ, որ փոքրիկ քույրիկ ունես:
- Ի՞նչ ես ասում, մա, ընդհակառակը, ուտելիս ես հենց միայն նրա մասին էի մտածում: Վախենում էի՝ շուտ կգա և ես չեմ հասցնի ուտել ամբողջը:

Մոսկվայի քաղաքապետարանը արդեն որբորդ անգամ նոր



սահմանափակումներ է մտցնում ակոհոլի վաճառքը կարգավորելու ուղղությամբ: Նրանք, ափսոս, միշտ մոռանում են, որ չխմած ռուսը պոտենցիալ հեղափոխական է և խռովարար:

- Ի՞նչ է, կոմունիստների ժամանակ դու ավելի լա՞վ էիր ապրում: - Հլա հարցնո՞ւմ ես... Կերակրում էին, հագցնում, տանում մանկապարտեզ: Այնտեղ ամբողջ օրը հեքիաթի էր նման. խաղում էինք, քնում, ուտում... Չէ, ես ինչքան հիշում եմ, կոմունիստների ժամանակ ես հրաշալի էի ապրում:

Երկու էլեկտրիկներ մազլցել են էլեկտրականության վրա և տաք-տաք վիճում են: Տակով անցնում է մի պառավ. - Մայրիկ, մայրիկ, այդ ընկած էլեկտրավարի ծայրը տուր մեզ: Տատիկը բարի էր. վերցրեց լարը և փոխանցեց նրանց. - Ըհը, կոտոշ, բա որ ասում էի նույն է, հա վիճում էիր՝ ֆազն է, ֆազն է:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Գ. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտը հայտարարում է մրցույթ ինստիտուտի լաբորատորիաների վարիչների և գիտաշխատողների թափուր տեղերի համար  
1. Բույսերի սննդառության և արդյունավետության լաբորատորիա  
• առաջատար գիտաշխատող - 2 տեղ,  
• ավագ գիտաշխատող - 2 տեղ,  
• գիտաշխատող - 3 տեղ,  
• կրտսեր գիտաշխատող - 3 տեղ:  
2. Հիդրոպոնիկական փորձարարական կայան

• վարիչ,  
• ավագ գիտաշխատող - 1 տեղ:  
3. Հյուսվածքային մշակույթի լաբորատորիա  
• վարիչ,  
• գիտաշխատող - 1 տեղ:  
4. Ագրոքիմիայի և ռադիոքիմիայի լաբորատորիա  
• վարիչ,  
• կրտսեր գիտաշխատող - 1 տեղ:  
Անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել հայտարարության օրվանից 1 ամսվա ընթացքում հետևյալ հասցեով՝ Երևան, Նորագյուղ 108, ՀՀ ԳԱԱ Գ. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ, հեռ.՝ 56-30-15:

## Ուժ անաբիշուլություններ և ուժ ախպեր

Հայտնի է, որ Չինաստանի հասարակական վայրերում, զվարճանքի օջախներում, կանգառներում, զբոսայգիներում, պատմական հուշարձանների մերձակայքում, դպրոցներում, բարձրագույն ուսումնական հաստատություններում և ընդհանրապես մարդաշատ վայրերում փակցված-կախված է հայտարարության տախտակ հիշեցնող մի պաստառ, որի վրա մեկեն աչք զարնող հիերոգլիֆներով գրված է՝  
«Ուժ անաբիշուլություններ և ուժ ախպեր»: Ուշադրության հրավիրող այդ վերնագրի տակ շարադրված է  
- Միրիր հայրենիքը: Մի վնասիր նրան:  
- Ծառայիր ժողովրդիդ: Երբեք մի դավաճանիր նրան:  
- Անընդհատ սովորիր: Մի լինիր անկիրթ:  
- Եղիր աշխատասեր: Մի եղիր ծուլ:  
- Եղիր հոգատար և զգայուն, օգնիր մարդկանց: Մի հարստանա ուրիշների հաշվին:  
- Եղիր ազնիվ և պարկեշտ: Հանուն հարստության մի դավաճանիր սկզբունքներիդ:  
- Եղիր կարգապահ և օրինապաշտ: Ոչ քառսին և անօրինականությանը:  
- Ապրիր համեստ, աշխատիր ջանադիր: Մի թաղվիր շվայտության և ցուփոթյան մեջ:  
Մեկ և կես միլիարդ բնակչության յուրաքանչյուր գրագետ անձնավորություն գրեթե ամեն օր կարդում է այս պատվիրանները: Համոզված ենք, շատ-շատերը ականջալուր են լինում այդ խորհուրդներին:  
Կարծում ենք օգտակար կլինեն նման հայտարարություն էլ փակցնել նաև մեզ մոտ: Քրիստոնեական պատվիրաններ հիշեցնող այս հորդորները անչափ այժմեական են և շատ անհրաժեշտ՝ դրանք մոռացության մատնած մեր հասարակության համար:

## «Գիտություն»

Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղդասյան 24թ, հեռ. 56-80-14: Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448: Ստորագրված է տպագրության՝ 22. 12. 2012 թ.: Տպաքանակը՝ 500: